

Վերածնունդ

Հարաբաերթ «Krtutian» (education) weekly «Кртытиан» (образование) еженедельник 15.02.2023թ. չորեքշաբթի թիվ 7 (1084)

Փետրվար

Մայիսը հաղթանակների ամիս է: Փետրվարը միշտ նախորդում է մայիսին. հաղթանակներին նախորդում են **զարթոնքները**:

Փետրվարը զարթոնքի ամիս է: **1988-ի փետրվարի 20-ին** սկսված Արցախյան շարժումը հաշված օրերի ընթացքում վերածվեց **համազգային** շարժման, եւ սկզբնավորվեց ազգային ազատագրական պայքարի նորագույն՝ **հաղթական** փուլը: Բնականաբար, ոսոխը կրկին ելավ մեր դեմ սրով եւ ջախջախվեց, որովհետեւ **միակամ** էինք եւ ապավինեցինք միայն **մեր** բազկին ու մտքին:

Արցախն ազատագրվեց: Կնքվեց գինադադար, սակայն պատերազմը դեռ չէր ավարտվել: Վկա՝ Ապրիլյան քառօրյան... վերջին 44-օրյան... Օգտվելով մեր խաղաղասեր բնույթից՝ թշնամին կրկին զենք վերցրեց ու ելավ մեր դեմ... Եվ ոսոխն այսօր էլ կրկին հոխորտում է... Հայ սպային Եվրոպայի կենտրոնում կացնահարած սինլըրո մարդասպանին հռչակում է տարվա մարդ... Ի՞նչ մարդ... Իր հավաքական ամբողջության մեջ լույսի թշնամի, խաղաղության հակոտնյա ոսոխը չի կարող հանդուրժել եւ ոչ մի **բարի գոյություն**՝ անգամ իր տիրապետության ներքո... Իր **չար** բնույթը թույլ չտվեց հանդուրժել անգամ նախնիներիս խաչքարերի վերջին փշուրների լուռ վկայությունը իր **գողացած տարածքում**... Այսօր էլ՝ նոր տարածքներ զավթելուց հետո, փակել է Մայր Հայրենիքը Արցախին միացնող ճանապարհը՝ Բերձորի (Լաչինի) միջանցքը... Ինչպե՞ս ներենք, ինչպե՞ս հանդուրժենք **մարդկության մոլախոտի** ներկայությունը մեր ճակատագրի կիզակետում՝ որպես մեր գլխավերելուն միշտ կախված եւ ընծեմված ամեն առիթով՝ մեր կոկորդում խրված սուր: Ով՞ ով, մենք հո՞ գիտենք հանդուրժողականության գինը... Որ ի վերջո հանդուրժողին ենթարկում է **ցեղասպանության**... Մոռանա՞նք մեր հայրենակիցների **Սումգայիթյան սպանող, Բաքվի հայության կոտորածները**, նոր պատերազմի սանձազերծումն ու **Թալիշի վայրագությունները**, ռազմագերիներին, անգամ՝ արդեն զոհվածներին, խոշտանգելը... Ո՞րը թվարկել եւ ինչո՞ւ թվարկել: Ամեն օր, ամեն ժամ իր վայրագ դեմքը թաքցնել անգամ չփորձող գազանը եղել եւ մնում է վտանգավոր, քանի դեռ ջախջախված չէ **ի սպառ**:

Մենք իրավունք չունենք ներելու, հանդուրժելու, զիջելու խավարին, որովհետեւ **ուխտ ունենք դեպի լույս**: Եվ որպեսզի **եղիցի լույս**, պիտի լինի **փետրվար**, որ չուշանա եւ մայիսը:



Սրբոց Վարդանանց



Եթե հայ ես, ուրեմն՝ զինվոր ես, անկախ նրանից՝ **սուր** է ձեռքինդ, **խաչ**, **բահ**, թե **գրիչ**: Ու հայոց պատմությունն էլ եղել է ընդհանրական **Ավարայր**. գոյապայքար թե՛ իրական, թե՛ հոգեւոր պատերազմների մեջ՝ հանուն ինքնության, տեսակի պահպանման, հանուն համընդհանուր քաղաքակրթական զարգացման:

Ավարայրը մեր հիշողության մեջ մնացած **առաջին հայրենական պատերազմն** է, նաեւ՝ *աշխարհում հանուն հավատի մղված առաջին խոշոր մարտն ընդհանրապես*, որ մեզանում մնաց՝ որպես հանուն հայրենիքի անձնազոհության եւ գիտակցված մահի գաղափարական խորհրդանիշ. **«Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»**, - **Վարդանանց** պատմիչ **Եղիշեի** բանաձեւ-ձեւակերպումը եղավ մեր ամենից սվիրական ասույթ-կարգախոսը:

Սուրբ Վարդանանց, այս անունով են ճանաչվում այն բոլոր նահատակները, ովքեր մարտիրոսվեցին **Ավարայրի** ճակատամարտում՝ **451թ., վասն Հիսուսի, վասն Հայրենյաց**:

Հաճախ ենթադրվում է, թե **քրիստոնեությունը** ստրկության ու լոկ հնազանդության ուսմունք է: Մինչդեռ տասնյակ դարեր առաջ **Վարդանանց** ապացուցեցին, որ **քրիստոնեությունը** կոչում է սխրանքի եւ հավերժության:

Ավարայրը քրիստոնյա աշխարհի թերեւս առաջին ու միակ ռազմական բախումն էր, ուր լույսի եւ խավարի, կյանքի եւ մահվան, հավատի եւ հավատախախտության, հայրենիքի ու ստրկացման իրարամերձ գաղափարներն էին բախվում, ուր ճշտվում էր մեկ անգամ եւս **Հիսուսի՝ մեռնելով ապրելու** պատգամը:

Վարդանանց սուրբ նահատակների տոնն ամեն տարի նշվում է Մեծ Պահքին նախորդող հինգշաբթի օրը: Այս տարի տոնը ոգեկոչվելու է վաղը՝ **փետրվարի 16-ին**:

Որպես կանոն, Վարդանանց տոնին նախորդող երեքշաբթի օրը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում է **Ղեւնդյանց** ոգեկոչման օրը: Սակայն այս տարի տոնը նշվեց անցած երկուշաբթի՝ **փետրվարի 13-ին**, պայմանավորված այն հագամանքով, որ երեքշաբթին զուգահիսեվ էր մշտապես **փետրվարի 14-ին** տոնվող **Տյառնընդառաջին**:

Հարունակությունը՝ էջ 7

Ձմեռ

Տարվա բոլոր եղանակներն էլ գեղեցիկ են... Չե՞ք հավատում, պոետներին հարցրեք (**տե՛ս էջ 8-9**):

Թեւեւ ցուրտ է, ձյուն ու սառույց, բայց ձմեռն էլ իր հմայքներն ունի: Եվ ոչ միայն մանուկների համար: Ձմեռը նաեւ զարման ավետաբերն է, ու թե առատ է ձյունը, առատ է լինելու նաեւ տարվա հունձքը: Տա՛ Աստված:

Իսկ մինչ այդ... Ձմեռը նաեւ փորձություն է... Փորձություն **Երկրի, Ազգի ու Մարդու...** Ձմեռը լինում է նաեւ քաղաքական... Տա՛ Աստված, այն չլինի տեսական, ու չուշանա **Գարունը**:

Մշակույթ

Մեր անձնագրերը՝ դեպի մեծ աշխարհ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով, եւ «Աջակցություն հորեյանական նախագծերին» դրամաշնորհային ծրագրի շրջանակում «Անտարես» հրատարակչությունը լույս է ընծայել «Համո Բեկնազարյան» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատկերազրույցը: Այդ առիթով Հայաստանի կինոգործիչների միության «Բուխարու սրահում» տեղի ունեցած շնորհանդեսին ներկա էր ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմայանը:

Հայ կինոյի 100-ամյակին նվիրված գիրք-ալբոմը ներկայացնում է հայկական տեսողական մշակույթի հսկաներից մեկի՝ ազգային կինեմատոգրաֆի հիմնադիր Համո Բեկնազարյանի կյանքի եւ ստեղծագործության լեգենդար ուղին: Պատկերազրույցը կազմել են Ջավեն Բոյաջյանը եւ Ռուզաննա Բազրատունյանը: Գրքի լուսանկարչական նյութի զգալի մասը հրատարակվել է առաջին անգամ:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմայանը շնորհավորել է ներկաներին գրքի հրատարակման կապակցությամբ եւ ընդգծել, որ հայ կինոյի հիմնադիր Համո Բեկնազարյանի մասին պատմող այս պատկերազրույցի միջոցով տեղեկատվական մեծ անդունդ է լրացվում:

«Նախորդ տարվանից պետական քաղաքականության առաջնահերթություններից մեկը, մասնավորաբար՝ գրահրատարակչության ոլորտում, հայ մշակույթի վերաբերյալ օտար լեզուներով տեղեկատվության մշակումն ու տարածումն է: Եվ այս պատկերազրույցի ի հայտ գալը որոշակիորեն իմաստավորվում է այդ քաղաքականության համատեքստում: Համո Բեկնազարյանին նվիրված պատկերազրույցի զարգացումը եղել է 2019 թվականից: Գրքի լույսընծայումն անձնական եւ հանրային ձեռքբերում են համարում, որովհետեւ Համո Բեկնազարյանն ու նման անունները մեր ելքի վիզաներն են, մեր անձնագիրը դեպի մեծ աշխարհ, մեծ իրականություն», - ընդգծել է նախարարի տեղակալը:

շարունակությունը՝ էջ 5

Հաստատվել է դպրոցի տնօրենի նշանակման նոր կարգը

ՀՀ կառավարության միտումնաքաղաքական է արժանացել պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման կարգը: Նոր կարգավորումները տարածվում են որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարվող մրցույթի արդյունքում ծագած հարաբերության վրա:

Գործող կարգով տնօրենների ընտրության համար հիմք է հանդիսանում 2010 թվականին ներդրված հավաստագրման գործընթացը, որը նույնական մոտեցում է բոլորի համար՝ անկախ աշխատանքային փորձից: Այդ բացը լրացնելու համար տնօրենը զարգացման ծրագրի հիմքով պետք է անցնի ընտրության ոչ մեկ փուլ: Տնօրենի ընտրության եւ նշանակման գործընթացի մաս է կազմում հաստատության խորհրդի որոշումը, որի արդյունավետության վերաբերյալ ստացված բազմաթիվ դիմում-բողոքները հիմք են հանդիսացել կառավարման համակարգի ուղղության օրենսդրական փոփոխություններ իրականացնելու համար:

Նոր կարգավորմամբ՝ հաստատության տնօրենն անցնում է նույն ընթացակարգով, ինչ նախորդ կարգով էր պահանջվում, սակայն այլ մեխանիզմ է առաջարկվում զարգացման ծրագրի ուսումնասիրման, այնուհետեւ մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիմքով նշանակման առումով: Հստակեցվել են մրցույթի մասնակցի ներկայացրած անհրաժեշտ փաստաթղթերը, զարգացման ծրագիրը փորձաքննության ներկայացնելու ընթացակարգը, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության նկարագիրը, մրցույթի արդյունքների ամփոփման, բողոքարկման մեխանիզմը:

Մասնավորապես՝ սահմանվել է թափուր տեղի մրցույթի հայտարարման նոր ժամկետ, եւ հավակնորդը հաստատված ձեւաչափին համապատասխան՝ տվյալ հաստա-

տության զարգացման իր ծրագիրը պետք է ներկայացնի (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով) լիազոր մարմնին՝ պաշտոնական կայքում տեղադրելու համար:

Հաստատության տնօրենը կամ տնօրենի պարտականությունները կատարողը կամ պաշտոնակատար պարտավոր է ապահովել հավակնորդի հանդիպումը տվյալ հաստատության մանկավարժական, ծնողական եւ աշակերտական խորհուրդների հետ՝ զարգացման ծրագիրը կազմելու համար առաջարկություններ լսելու նպատակով: Սահմանված հանդիպմանը չմասնակցելու դեպքում հավակնորդը չի կարող մասնակցել հայտարարված մրցույթին: Տնօրենը կամ տնօրենի պարտականությունները կատարողը կամ պաշտոնակատարը պարտավոր է նաեւ հավակնորդի կողմից ներկայացված գրավոր դիմումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել գրավոր անհրաժեշտ տեղեկատվությունը՝ հաստատության գործունեության վերաբերյալ:

Մրցույթն անցկացնում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ձեւավորված մասնագիտական հանձնաժողովը, որը կազմված է 7 անդամից: Հանձնաժողովում ընդգրկված են նախարարի՝ տվյալ ոլորտը համակարգող տեղակալը (բացակայության դեպքում՝ նրան փոխարինող նախարարի տեղակալը), որն ի պաշտոնե հանդիսանում է մասնագիտական հանձնաժողովի նախագահ, ինչպես նաեւ երկու ներկայացուցիչ նախարարության հանրակրթության վարչությունից եւ մեկական ներկայացուցիչներ՝ անձնակազմի կառավարման եւ իրավաբանական վարչություններից, Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոնից եւ Հանրապետական մանկավարժաբանական կենտրոնից:

Մասնագիտական հանձնաժողովը մշակում է նախարարի հաստատմանն է ներկայացնում հավակնորդի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները: Հավակնորդի զարգացման ծրագիրը ստանա-

լուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովն այն ներկայացնում է փորձաքննության, որն իրականացվում է ուղղակի կամ մրցութային դրամաշնորհի արդյունքում ընտրված կազմակերպության կողմից: Փորձաքննության արդյունքում կազմակերպությունը յուրաքանչյուր զարգացման ծրագրի մասին կազմում է տեղեկանք, որը ներկայացնում է մասնագիտական հանձնաժողովին:

Կազմակերպության ներկայացրած փորձաքննության արդյունքների հիման վրա մասնագիտական հանձնաժողովը քննարկում է 3 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան լիազոր մարմնին է ներկայացնում հավակնորդի զարգացման ծրագրի վերաբերյալ դրական կամ բացասական եզրակացություն: Եզրակացությունը ստանալուց հետո լիազոր մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում է անցկացնում է հարցազրույց դրական եզրակացություն ունեցող բոլոր հավակնորդների հետ, որի արդյունքում կարող է հավակնորդներից մեկի հետ (եթե դրանց թիվը մեկից ավելի է) կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան անձի 65 տարին լրանալը:

Հարցազրույցն անցկացնում է լիազոր մարմնի ղեկավարը կամ ղեկավարի տվյալ ոլորտը համակարգող տեղակալը: Հարցազրույցը տեղի է ունենում հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագրի, նրա աշխատանքային ստաժի, մասնագիտական գործունեության, կարողունակությունների եւ անձնային որակների շրջանակում: Հարցազրույցի ողջ ընթացքը ձայնագրվում կամ տեսաձայնագրվում է:

Հարցազրույցին հավակնորդներից ոչ մեկի չներկայանալու կամ հարցազրույցի արդյունքում հավակնորդներից որեւէ մեկի հետ աշխատանքային պայմանագիր չկնքելու դեպքում լիազոր մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում հայտարարում է նոր մրցույթ՝ կարգի պահանջներին համապատասխան:

Հաստատվել են նաեւ ուսուցչի հերթական ատեստավորման եւ տարածքային հանձնաժողովների գործունեության կարգերը

ՀՀ կառավարության միտումնաքաղաքական է արժանացել հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի հերթական ատեստավորման եւ տարածքային հանձնաժողովների ստեղծման ու գործունեության կարգերի նախագիծը:

Կարգերով հստակեցվել են ատեստավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ուսուցչին ատեստավորման արդյունքների մասին պատշաճ կերպով ծանուցելու, կրթության կառավարման տեղեկատվական համակարգում յուրաքանչյուր ուսուցչի զբաղեցրած պաշտոնին համապատասխանելու վերաբերյալ անհրաժեշտ գործողությունների իրականացման գործընթացները:

Նոր կարգավորումներով ատեստավորման գործընթացում վարչարարությունը կրճատվում է, որն իրականացվում է թվայնացված եղանակով:

Ատեստավորումն ուսումնական հաստատությունում զբաղեցրած պաշտոնին ուսուցչի մասնագիտական գիտելիքների, աշխատանքային կարողությունների եւ հմտությունների համապատասխանության որոշման գործընթացն է:

Ուսուցչի ատեստավորման ամբողջական շրջափուլը հինգ տարի է, որը բաղկա-

ցած է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված՝ յուրաքանչյուր տարի իրականացվող վերապատրաստումներից:

Ատեստավորումն իրականացվում է պարզ ընթացակարգով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության սահմանած՝ ուսուցչի ատեստավորմանը ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա:

Ուսուցչի ատեստավորումն իրականացվում է ՀՀ մարզերում, Երեւան քաղաքում, նախարարության ենթակայության ուսումնական հաստատությունների համար՝ նախարարությունում, փաստաթղթային ատեստավորման եղանակով՝ ուսուցչի ատեստավորման տարածքային հանձնաժողովի կողմից:

Ատեստավորման ենթակա ուսուցչին հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենն ատեստավորումից ոչ ուշ, քան երեք ամիս առաջ գրավոր ծանուցում է փաստաթղթային ատեստավորման եւ անցկացման ժամկետի մասին:

Ատեստավորման հանձնաժողովն անհատական քվեարկության միջոցով անդամների կեսից ավելի կողմ ձայներով որոշում է ընդունում յուրաքանչյուր ուսուցչի զբաղեցրած պաշտոնին համապատաս-

խանելու վերաբերյալ: Ատեստավորվող ուսուցչին իրավունք ունի ներկա գտնվելու իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանության մասին հարցի քննարկմանը եւ որոշման ընդունմանը:

Ատեստավորման հանձնաժողովի ամփոփիչ արձանագրությունը ԿԳՄՍ նախարարության կայքում հրատարակվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով՝ ՀՀ կրթության տեսչական մարմնին կամ դատական կարգով: Բողոքարկման հանձնաժողովի եզրակացության հիման վրա տեսչական մարմնի ղեկավարի կայացրած որոշումը ներկայացվում է ատեստավորման հանձնաժողովին՝ տվյալ ուսուցչի զբաղեցրած պաշտոնին համապատասխանության հարցը վերանայելու կամ որոշումն անփոփոխ թողնելու վերաբերյալ:

Ատեստավորման հանձնաժողովների գործունեության նպատակը հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի պարզ ընթացակարգով՝ փաստաթղթային եղանակով, ատեստավորում իրականացնելն է:

Ատեստավորման հանձնաժողովները երեք տարի ժամկետով եւ հասարակակա-

նախորդներով գործող մարմիններ են, որոնք բաղկացած են 5 անդամից:

Ատեստավորման հանձնաժողովները ձեւավորվում են նախարարի հրամանով՝ տվյալ տարածքային կառավարման մարմնի ղեկավարի՝ մարզպետի, Երեւան քաղաքում՝ Երեւանի քաղաքապետի առաջարկության հիման վրա:

Ատեստավորման հանձնաժողովների կազմում կարող են ընդգրկվել հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներ, լիազոր մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի, Երեւանի քաղաքապետարանի կողմից առաջարկման դեպքում՝ համապատասխան վարչական շրջանի կրթության ոլորտի եւ նախարարության աշխատողները: Ատեստավորման հանձնաժողովները կազմվում են նախարարի երեք եւ լիազոր մարմնի երկու ներկայացուցիչներից:

Ատեստավորման հանձնաժողովների նիստերն իրավազոր են, եթե նիստերին մասնակցում է հանձնաժողովի անդամներից առնվազն չորսը: Հանձնաժողովների որոշումներն ընդունվում են անդամների կեսից ավելի կողմ ձայներով:

Հեղինակ՝ ՅՈՒՆԱՆՆԻՍՅԱՆ

Աշխարհի հետ

«Ձեր կողքին ենք եւ պատրաստ ենք օժանդակել»

Նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է 33-ում Սիրիայի Արաբական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Նորա Արիսյանին:

ԿԳՄՍ նախարարը, ողջունելով դեսպանին, արժեւորել է փոխադարձ համակրանքի եւ վստահության վրա հիմնված երկու ժողովուրդների ավանդական բարեկամական կապերը՝ այդ գործում կարեւորելով նաեւ սիրիահայ համայնքի ունեցած դերը: Ժաննա Անդրեասյանն իր գորակցությունն է հայտնել Սիրիայի բարեկամ ժողովրդին եւ վերահաստատել Հայաստանի պատրաստակամությունը աջակցելու Սիրիային աղետալի երկրաշարժի հետեւանքները հաղթահարելու գործում: «Մենք ձեր կողքին ենք եւ պատրաստ ենք հնարավոր բոլոր միջոցներով օժանդակել՝ ստեղծված դժվարին իրավիճակն ու փորձությունները հաղթահարելու ճանապարհին: Կարծում եմ՝ համատեղ ջանքերը կնպաստեն աղետի հետեւանքների եւ վնասների վերականգնմանը: Հավաստիացնում եմ՝ այդ ջանքերը կշարունակվեն այնքան, որքան դրանց կարիքը լինի»:

33-ում Սիրիայի Արաբական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Նորա Արիսյանը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար, ներկայացրել աղետի հետեւանքով երկրում ստեղծված իրավիճակի մանրամասները: Դեսպանը Սիրիայի կառավարության անունից շնորհակալություն է հայտնել Հայաստանին ցուցաբերած աջակցության համար՝ բարձր գնահատելով 33 կառավարության ջանքերը՝ սատարելու Սիրիային այս դժվարին ժամանակներում: «Խորապես զգացված եւ շնորհակալ ենք այն աջակցության համար, որ Հայաստանի կառավարությունն աղետի առաջին իսկ օրվանից ցուցաբերեց Սիրիային: Բացի մարդասիրական օգնությունից՝ մեզ համար շատ կարեւոր էր նաեւ այն, որ Հայաստանը Սիրիա ուղարկեց որոնողափրկարարական թիմերի: Մենք նրանց կարիքն իսկապես շատ ունենինք»:



Սիրիայի դեսպան Նորա Արիսյանը հանդիպում է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին:

Դեսպանի խոսքով Սիրիայի Լաթաքիա, Հալեպ, Համա մահադեհերում երկրաշարժի հետեւանքով ավերվել եւ վնասվել են պատմամշակութային մի շարք կարեւոր կոթողներ, փլուզվել կամ վնասվել է շուրջ 250 դպրոց:

ԿԳՄՍ նախարարը վստահություն է հայտնել, որ առաջ գնալու պատրաստակամությունն ու հաստատակամությունը մեծապես կօգնեն հաղթահարելու առաջացած դժվարությունները: Ժաննա Անդրեասյանը վերահաստատել է նաեւ բոլոր ուղղություններով փոխհամագործակցության հեռանկարները դիտարկելու հնարավորությունը:

Նախարարը կարեւորել է նաեւ միջբուհական համագործակցության զարգացումը՝ ընդգծելով Դամասկոսի համալսարանի հայագիտական բաժնի գործունեությունը եւ համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունը:

«Մեր երկու երկրների համար, կարծում եմ, սա շատ կարեւոր նշանակություն ունի: Ուրախ եմ, որ Ձեր անձնակազմը գործունեությունը եւս մեծ նպաստ է բերել այս նախագծին: Պատրաստ կլինենք նաեւ նոր

ծրագրերի մասին խոսել: Հետաքրքրված ենք մեր բուհերում Սիրիայի քաղաքացիների ուսուցման հնարավորությամբ: Գիտեմ, որ սերտորեն համագործակցում եք երեւանի պետական համալսարանի հետ: Արաբերենի ուսուցման տեսանկյունից՝ այդ համագործակցությունը եւս կարեւորում ենք: Կրթական տարբեր մակարդակներում խրախուսում ենք տարածաշրջանային լեզուների ուսուցումը: Այդ իսկ պատճառով պատրաստ ենք հասկանալ նաեւ դպրոցներում արաբերենի ուսուցման հնարավորությունները: Հասկանալի է՝ այս օրերին մեր առաջնային հարցերը մի փոքր այլ են, բայց իրավիճակի կարգավորմանը զուգընթաց՝ պատրաստ ենք նաեւ համագործակցության հեռանկարները դիտարկել», - ասել է Ժաննա Անդրեասյանը:

ԿԳՄՍ նախարարը բարձր է գնահատել նաեւ նախարարության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության բարձրագույն կրթության նախարարության միջեւ կրթության եւ գիտության բնագավառում 2022-2027 թթ. համար համագործակցության մասին ծրագրի ստորագրումը եւ հայտնել նախարարության պատրաստակամությունը, ըստ անհրաժեշտության, այն արդիականացնելու:

ԿԳՄՍ նախարարը հանդիպել է Կորեա-Հայաստան պատգամավորական բարեկամական խմբի հետ

33 ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է Կորեայի Հանրապետության Ազգային ժողովի Կորեա-Հայաստան պատգամավորական բարեկամական խմբի ղեկավար Սոն Կիհունի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա են եղել նաեւ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, 33 Աժ պատգամավոր Թագուհի Ղազարյանը, Աժ եւ ԱԳՆ ներկայացուցիչներ:



Սոն Կիհունը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար կարեւորելով համագործակցությունը կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի ոլորտներում: «Հայաստանը եւ Կորեան մշակութային ու գիտակրթական բնագավառների առումներով ունեն նմանություններ: Կորեայում լավ զարգացած է տեխնոլոգիական բնագավառը: Համատեղ համաձայնագրի կնքմամբ մենք առավել կսերտացնենք մեր հարաբերությունները թե՛ տեխնոլոգիական, թե՛ գիտական, եւ թե՛ մշակութային ոլորտներում», - ասել է Սոն Կիհունը:

Կողմերը պատրաստակամություն են հայտնել զարգացնելու համագործակցությունը նաեւ տեխնոլոգիաների ոլորտում՝ այն ամրագրելով «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Կորեայի Հանրապետության գիտության եւ տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների նախարարության միջեւ գիտության եւ տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին» համաձայնագրով:

Սոն Կիհունը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար կարեւորելով համագործակցությունը կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի ոլորտներում: «Հայաստանը եւ Կորեան մշակութային ու գիտակրթական բնագավառների առումներով ունեն նմանություններ: Կորեայում լավ զարգացած է տեխնոլոգիական բնագավառը: Համատեղ համաձայնագրի կնքմամբ մենք առավել կսերտացնենք մեր հարաբերությունները թե՛ տեխնոլոգիական, թե՛ գիտական, եւ թե՛ մշակութային ոլորտներում», - ասել է Սոն Կիհունը:

Ողջունելով պատվիրակության անդամներին՝ Ժաննա Անդրեասյանը կարեւորել է կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի բնագավառներում հայ-կորեական կապերի եւ փոխգործակցության զարգացումը: Նախարարը հյուրերի ուշադրությունն է հրավիրել մի շարք ընթացիկ ծրագրերի իրականացմանը, ինչպես նաեւ նախանշել հետագա համագործակցության հնարավոր ուղղությունները:

Անդրադարձ է եղել 33 կրթության եւ մշակույթի ոլորտներում իրականացվող բարեփոխումների ընթացքին, եւ երկուստեք վերահաստատվել պատրաստակամությունը՝ առավել սերտորեն համագործակցելու ոլորտային ծրագրերի իրականացման գործում:

Փետրվար

Պայքարի դասերով

88-ի փետրվարը... այսօր այնքան հեռու եւ այնքան ցավալիորեն մերձ իրեն տազնապով տրոփող սիրտ, գերզգայուն մաշկ ու նյարդ...

...Երեսուհինգ տարին նվիրվածների բազմին է, սակայն նաեւ ասպարեզը՝ պարտությունների դաժն դասի...

88-ի փետրվարին էլ Արցախ բերող բոլոր ճանփաները գոց էին, թշնամին մեզ զրկել էր եւ լույսից եւ զագից, պարենի եղած պաշարներն արագորեն նվազել էին, բայց մի անտես հրաշքով սովից մահացողներ չկային, քանզի փրկության անշեջ հույսն էր բոլորիս հոգում: Մարդկային գոհերը գիշեր ու գոր մեր գլխին թափվող արկերից ու ռումբերից էին...

Ինչ գնահատական էլ տանք ինքներս մեզ, մերն են եւ հաղթանակները, եւ պարտությունները: Կրկին ինքնափրկության կոչնակն է տիրական՝ սեփական հայրենիքում ապրելու չբեկվող կամքով:

Այս ամենի մասին խոսվեց 88-ի փետրվարի 13-ից սկիզբ առած արցախյան շարժման առաջին համաժողովրդական ցույցերին նվիրված Արցախի պետական համալսարանում կայացած միջոցառմանը: Նախածեռնող խմբի անդամներն էին պատմության եւ իրավագիտության ֆակուլտետի՝ պատմության եւ քաղաքագիտության ամբիոնն ու բուհում գործող պատմաբանների ակումբը:

«13 փետրվար 1988 թ.-13 փետրվար 2023թ.» խորագրով հավաքին մասնակցում էին շարժման ակտիվիստներ, մայր բուհի դասախոսներ, ուսանողներ:

Պատմական գիտությունների թեկնածու Նուրե Սարունյանը ներկայացրեց տեղեկություններ շարժմանն ու պատերազմին մասնակցած բուհի ուսանողների մասին: Նրա խոսքով փետրվարի 13-ն իր պատմությամբ մեծ խորհուրդ ունի:

«Երեսուհինգ տարի առաջ այս օրը ժամանակի իշխանությունների խիստ վերահսկողության պայմաններում մեր ուսանողներն ու դասախոսները համարձակորեն, միահամուռ կերպով, իրենց ձայնը բարձրացրին հարբեջանական հակահայկական քաղաքականության դեմ եւ մայր Հայաստանին միասնալու իրենց կամքը արտահայտեցին: Թշնամին հենց առաջին օրը սպառնաց՝ հարյուր հազարավոր թուրք մտցնել Արցախ՝ վերջնական կոտորածի համար: Հիմա էլ, ցավոք, նույն սպառնալիքի առջեւ ենք բոլորս, ինչն էլ մեզ պետք է առաջնորդի դեպի միասնականություն ու համախմբվածություն: Մեր փրկությունը վերստին մեր հավաքական ուժի մեջ է», - նշել է նա:

Արցախի գիտական կենտրոնի տնօրեն, պատմաբան, մայր բուհի դասախոս Ստեփան Դադայանը շարժման տարիներին բուհի պատմության փակուղիները դեկան էր: Նա այդ օրերի քրոնիկոնից պատահիկներ ներկայացրեց, որոնք անցել են վտանգներով լի ճանապարհ՝ հանուն ազգապահպան մեծ գաղափարի, հանուն ազատ ու անկախ ապրելու դարերով փայփայած երազանքի: Պատմաբանի գնահատմամբ անուրանալի է համալսարանի դերակատարությունը արցախյան շարժման տարեգրությունում՝ ընդհատակյա պայքարից, զանգվածային ցույցերից՝ մինչեւ գոյապայքար:

88-ի ուսանողական սերնդի ներկայացուցիչ, շարժման ակտիվիստ, այժմ ԱՀ Աժ պատգամավոր Արթուր Մոսիսյանը իր ելույթում նշել է. «Մենք պետք է վերադառնանք մեր ազգային ազատագրական պայքարին, վերադառնանք ակունքներին: Մենք պարտվել ենք այս ճակատամարտում, բայց պատերազմը չի վերջացել, իսկ հաղթել կարող ենք միայն միասնականությամբ՝ հիմք ունենալով ազգային ազատագրական գաղափարախոսությունը: Դա է հաղթանակի ուղին»: Միջոցառմանը ելույթ ունեցան բուհի դասախոսներ, շարժման ակտիվիստներ: Բոլորի խոսքը ազուցվում էր մի կետով: Արցախյան ազգային ազատագրական շարժումը պետք է շարունակվի հենց շարժման պատմության դասերով:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Բ. Ստեփանակերտ, մեր սեփական թղթակից

Աշխատանքային խորհրդակցություն

Ակնկալելով արդյունավետ կառավարում

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն աշխատանքային խորհրդակցության է հրավիրել 33 մարզպետարաններ...



Խորհրդակցության ընթացքում քննարկվել են 2023 թվականի հունվարից ուժի մեջ մտած «Հանրակրթության մասին» 33 օրենքի փոփոխություններով պայմանավորված դպրոցների կառավարման նոր մոդելին առնչվող հարցերը...

տատության ուսումնական և վարչատնտեսական գործընթացների կառավարումը տարանջատվել են. ուսումնական մասի գործադիր մարմինը տնօրենն է, իսկ վարչատնտեսական գործընթացի կառավարումն իրականացնում է համակարգողը...

խանայինության հստակ բաշխմամբ: Առանձնացնելով վարչական և տնտեսական գործառնությունները՝ տնօրենին տրվում է լրացուցիչ ժամանակ՝ կրթական, ուսումնական, բովանդակային գործառնություններն ավելի լավ իրականացնելու համար...

Հանդիպման ընթացքում նշվել է նաև, որ, ըստ կառավարման նոր մոդելի, վարչական գործառնություններ են համարվում գնումների գործընթացը, սննդի և մաքրության կազմակերպումը, հաշվապահությունը, անվտանգության ապահովումը, ընթացիկ տեխնիկական սպասարկումը:

Նշվել է, որ այդ գործառնություններն իրականացնող աշխատողների համակարգման աշխատանքներն իրականացնելու է հաստատության համակարգողը մինչև օրենքով սահմանված կարգով տվյալ գործառնության պատվիրակումը: Անկախ պատճառներից՝ մրցույթը չկայանալու դեպքում պարբերաբար (առնվազն երկու ամիսը մեկ անգամ) հայտարարվելու է մրցույթ՝ մինչև հաղթող ճանաչվելը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալը եւս մեկ անգամ հիշեցրել է, որ դպրոցի կառավարման նոր մոդելը կգործի այն դպրոցներում, որտեղ տնօրենի թափուր տեղի մրցույթը հայտարարվել է 2023 թվականի հունվարից հետո:

Քննարկման մասնակիցները հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման նոր համակարգի վերաբերյալ ներկայացրել են իրենց դիտարկումներն ու առաջարկները, բարձրաձայնել են խնդիրները, մի շարք հարցեր են ուղղել հանդիպման կազմակերպիչներին:

ԿԳՄՍ նախարարության, Երևանի քաղաքապետարանի և մարզպետարանների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկումները կլինեն շարունակական խնդիրների հասցեական լուծումներ տալու նպատակով:

Հանրային քննարկումներ

Ներկայացվել է «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի» գործողությունների ծրագրի նախագիծը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրի նախագիծը:

բարձրացում, որը կապահովի ռեսուրսի (ներառյալ մարդկային) առավելագույն օպտիմալ և արդյունահանք տեղաբաշխում, համակարգի գործընթացային, ծախսային և կառավարման արդյունավետության բարձրացում՝ հիմնվելով կրթական համակարգի սոցիալական արդարության ապահովման սկզբունքի վրա,

Հանրակրթություն

- Հանրակրթության ոլորտում բովանդակության, մասնագիտական կարողությունների և որակի շարունակական զարգացում և հզորացում, ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացում:

- Հանրակրթական ծրագրերի բազմազանության և հասանելիության ապահովում՝ ծառայությունների հասցեական տեղաբաշխման և տրամադրման միջոցով:

- Հանրակրթական ուսումնական հաստատություններում անվտանգ, հազեցած և արդիական սովորելու միջավայրի և ռեսուրսների ապահովում:

- Հանրակրթական հաստատությունների ծախսարդյունավետ կառավարման և ֆինանսավորման մոդելների ներդրում:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն

- Նախնական և միջին մասնագիտական կրթության բովանդակության և մասնագիտական ներուժի արդիականացում ու հզորացում՝ աշխատաշուկայի և ժամանակակից մասնագիտական պահանջներին համահունչ:

- Նախնական և միջին մասնագիտական կրթության ընդլայնում և մատչելի, ներառական, անվտանգ միջավայրի զարգացում ու հասանելիության ապահովում բնակչության բոլոր խմբերի համար:

Ոչ ֆորմալ կրթություն

Ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչման մեխանիզմների ներդրում, մեծահասակների և երիտասարդների հարա-

տե ուսումնառության և մարդկային կապիտալի շարունակական զարգացման միջավայրի ու պայմանների ապահովում:

Բարձրագույն կրթություն

- Բարձրագույն կրթության ոլորտում համընդհանուր հասանելի և մատչելի սովորողակենտրոն հանրակրթական միջավայրի ստեղծում:

- Բարձրագույն կրթության արդյունավետության բարձրացում:

- Բարձրագույն կրթության միջազգայնացում:

Սփյուռք

Նպաստել հայոց լեզվի տարածմանը, գիտական արտադրանքի ներկայացմանը և հայկական մշակույթի հանրահռչակմանը օտար երկրներում:

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը, որպես օրենսդրական պահանջ, ամրագրված է «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» 33 օրենքի 3-րդ հոդվածով, համաձայն որի՝ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Կառավարությունը եռամսյա ժամկետում պետք է հաստատի օրենքից բխող գործողությունների ծրագիրը: Նախագծի ընդունումը, որպես կրթության բոլոր մակարդակների զարգացման ռազմավարական նպատակներն ու բարեփոխումների ուղղությունները ներկայացնող փաստաթուղթ, ամրագրված է նաև մի շարք միջազգային համագործակցության փաստաթղթերում: Նախագիծը մշակել է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը՝ ԵՄ և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակների աջակցությամբ:

Աշխարհի հետ

Քննարկվել են ոլորտային համագործակցության հարցեր

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը** ընդունել է Հայաստանում Պորտուգալիայի Հանրապետության նորանշանակ դեսպան **Մադալենա Ֆիշերին**:

Ժաննա Անդրեասյանը շնորհավորել է դեսպանին նշանակման կապակցությամբ եւ արդյունավետ աշխատանք մաղթել դիվանագիտական առաքելության ընթացքում ի շահ հայ-պորտուգալական բարեկամական կապերի զարգացման: ԿԳՄՍ նախարարը համոզմունք է հայտնել, որ նա իր ներդրումը կունենա Հայաստանի եւ Պորտուգալիայի միջեւ հարաբերությունների առավել ամրապնդման եւ խորացման գործում:

Դեսպան Մադալենա Ֆիշերը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ ընդգծել, որ երկու երկրների միջեւ կրթական, գիտական, մշակութային ու մի քանի այլ ուղղություններով առկա է սերտ համագործակցության մեծ ներուժ: Հանդիպման ընթացքում կողմերը պատրաստակամություն են հայտնել ընդլայնելու համագործակցությունը վերոնշյալ ոլորտներում:

Անդրադառնալով կրթության ոլորտում համագործակցության հեռանկարներին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ընդգծել է, որ Հայաստանը գտնվում է կրթական բարեփոխումների փուլում, իսկ Աժ կողմից որպես օրենք ընդունված ՀՀ կրթության զարգացման մինչեւ 2030 թվականի ծրագրով սահմանված են բոլոր թիրախները: Ծրագրի վերջնական նպատակն է ունենալ ազգային եւ համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ եւ միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ:

«Տեղյակ եմ, որ Ազգային ժողովի աշխատանքային խումբը 2022 թվականի հոկտեմբերին հանդիպում է ունեցել Պորտուգալիայի կրթության նախարարության ներկայացուցիչների հետ եւ քննարկել ներառական կրթությանը վերաբերող հարցեր: Սա մեզ համար շատ կարեւոր ուղղություն է: Ուղղակի կարեւոր թիրախներից մեկը բարձրագույն ուսումնական հաստատությունների միջազգայնացումն է, այս առումով ես կարող եմ դիտարկել համագործակցության հեռանկարները», - ասել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարը համոզմունք է հայտնել, որ, մասնավորապես, ուսանողական փորձի փոխանակման, թվային տնտեսության, գյուղատնտեսության եւ վերականգնվող էներգիայի ոլորտներում առկա է համագործակցության ներուժ, որը կարող է իրականացվել թե՛ բուհական, թե՛ մասնա-



գիտական կրթության մակարդակներում:

Անդրադառնալով բարձրագույն կրթության եւ գիտության ոլորտում համագործակցությանը, Ժաննա Անդրեասյանը նշել է, որ ԿԳՄՍ նախարարությունը հետևողական աշխատանք է տանում օտարերկրյա պետությունների համալսարաններում, թանգարան-ինստիտուտներում եւ կենտրոններում հայերենի ու հայագիտական առարկաների դասավանդման, ինչպես նաեւ հայագիտական հետազոտությունների խթանման ուղղությամբ: Արտերկրում գործում են շուրջ մեկ տասնյակ հայագիտական կենտրոններ, որոնք Հայաստանի պետական բյուջեից ֆինանսավորում են ստանում: Ժաննա Անդրեասյանը առաջարկել է դիտարկել Պորտուգալիայի համալսարաններից մեկում հայագիտական կենտրոն հիմնելու հնարավորությունը:

ԿԳՄՍ նախարարը նաեւ պատրաստակամություն է հայտնել կիսվելու մեր երկրում արդեն իսկ հաջողությամբ իրականացվող ծրագրերի, մասնավորապես՝ «Թունոյի» եւ «Արմաթի» փորձով: Դեսպան Մադալենա Ֆիշերը նշել է իրենք հետաքրքրված են այս հնարավորությամբ: Նա նաեւ հայտնել է, որ Պորտուգալիայի երկու քաղաքներում «Թունոյի» երկու կենտրոն է հիմնվելու, ինչը դեսպանի գնահատմամբ՝ կարեւոր նախաձեռնություն է:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը կարեւորել է նաեւ մշակութային համագործակցության հեռանկարները: Այս համատեքստում նա առաջարկել է հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի 120-ամյա հորեւյան առթիվ Պորտուգալիայի մշակութային հաստատություններում ներառել նաեւ նրա ստեղծագործությունները՝ որպես հարգանքի տուրք հա-

մաշխարհային դասականի հիշատակին: Կողմերը քննարկել են նաեւ համատեղ կինոարտադրության, ցուցահանդեսների կազմակերպման, ժամանակակից արվեստի այլ ուղղություններով համագործակցության հնարավորությունները:

Ժաննա Անդրեասյանը դեսպանի ուղարկությունն է հրավիրել նաեւ Լեռնային Ղարաբաղում հաստատված հունամիտար ճգնաժամի հունամիտար ճգնաժամի խնդրին եւ հույս հայտնել, որ միջազգային կառույցները հասցեական գործողություններ ու քայլեր կձեռնարկեն խնդրի կարգավորման համար:

«Լեռնային Ղարաբաղում հաստատված հունամիտար ճգնաժամի արդյունքում խախտվել են շուրջ 120 հազար բնակչի հիմնարար մի շարք իրավունքներ. նրանցից 30 հազարը երեխաներ են, այդ իսկ պատճառով ցանկանում են անդրադառնալ նրանց կրթության իրավունքի խախտմանը: Սնունդի մատակարարման անհնարինության, Ադրբեյջանի կողմից զազամատակարարման եւ էլեկտրաէներգիայի պարբերական խափանումների պատճառով թե՛ մանկապարտեզներում, թե՛ դպրոցներում, եւ թե՛ կրթական մյուս հաստատություններում գրեթե չեն իրականացվում ուսումնական գործընթացները, որն անթույլատրելի իրավիճակ է: Կարծում եմ՝ միջազգային հասցեական արձագանքը կնպաստի իրավիճակի կարգավորմանը», - ասել է Ժաննա Անդրեասյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ երկկողմ հետաքրքրություններ կայացնող այլ հարցեր: Կողմերը պատրաստակամություն են հայտնել քննարկելու միջպետական հուշագիր ստորագրելու հնարավորությունը, որով համագործակցության ուղղություններն ավելի հստակ կամրագրվեն:

Մեր անձնագրերը՝ դեպի մեծ աշխարհ

սկիզբը՝ էջ 2

«Նրանց ստեղծած ժառանգությամբ եւ նրանց գործունեության շնորհիվ,- շարունակել է Արա Խաչատրյանը,- մենք մուտք ենք գործել համաշխարհային մեծ ընտանիք, հայտնվել համաշխարհային մեծ գործընթացներում: Մենք ունենք երեւելի արժեքներ, որոնք իսկապես միջազգային նշանակություն ունեն կամ զոնե աշխարհին հետաքրքիր են որպես անհատներ, որոնք ապահովել են այս կամ այն երկրի մասնակցությունը համաշխարհային մեծ գործընթացներին: Համո Բեկնազարյանն այդ անուններին է»:

Փոխնախարարի տեղեկացմամբ՝ պատկերազարդ տարածվելու է միջազգային կարելուրագույն հարթակներում հայագիտական կենտրոններում, դիվանագիտական օղակներում, արտերկրի գրադարաններում: Նախատեսվում է գրքի էլեկտրոնային տարբերակները տարածել ու դիրքավորել համաշխարհային տեղեկատվական հարթակներում:



Չավեն Բոյաջյանի դիտարկմամբ՝ շատ քիչ գրականություն է ստեղծվել Համո Բեկնազարյանի մասին, մինչդեռ պետք է մի ամբողջ գրադարան լիներ. «Միշտ մտածել եմ, որ մենք Համո Բեկնազարյանին մատուցելու մեծ տուրք ունենք: Մտածեցի՝ շատ պարզունակ կլինի, եթե գիրքը կազմված լինի միայն պատկերներից եւ այդ պատկերների պրիմիտիվ մեկնաբանություններից, ուստի փորձել եմ այդ մակարդակները վերածել տեքստերի: Գիրքը շատ հագեցած է ոչ միայն պատկերային նյութով, այլեւ տեքստերով: Հիմնականում շեշտադրել եմ Բեկնազարյանի հուշերը, երբ ինքն է պատմում իր մասին, որպեսզի նրա անձը, ինքնությունը ներկա լինեն գրքում»:

Չավեն Բոյաջյանը, Բեկնազարյանի հուշերից գատ, որոնք վերցրել է կինոռեժիսորի ինքնակենսագրական գրքից, պատկերագրերում օգտագործել է նաեւ Կարեն Քալանթարի՝ Բեկնազարյանին նվիրված մենագրությունից դրվագներ, կինոգիտության կարելուրագույն դեմքերի՝ Սաբիր Ռիզաեի, Գրիգոր Զախրյանի, Սուրեն Հասմիկյանի դիտարկումները:

Գիրքը հանրագիտարանային բնույթ ունի. այն նաեւ ներկայացնում է առաջին տասնամյակների հայկական կինոն, դրա արշալույսը, հետագա տարիներն ու Բեկնազարյանի անցած ճանապարհը՝ սկսած ծննդյան օրվանից մինչեւ մահ:

Գրքում տեղ գտած լուսանկարչական նյութի զգալի մասը իրապարակվում է առաջին անգամ: Լուսանկարների մեծ մասը տրամադրել է Եղիշե Զարեմի անվան գրականության եւ արվեստի թանգարանը:

Ռուզաննա Բագրատունյանի նշմամբ՝ Բեկնազարյանի մասին պետք է տասնյակ գրքեր լինեին, սակայն, ավաղ, այդպես չէ. «Պատկերագիրքը փոքր, բայց շատ կարեւոր հատվածն է նրա մասին ամբողջ արխիվի, եւ ես հույս ունեմ, որ առաջիկայում այդ արխիվը լիարժեք կուսումնասիրվի գիտական տեսանկյունից, եւ գիտական գնահատական կտրվի, ինչը կարեւոր է սերունդների համար: Կարեւոր է, որ Բեկնազարյանի ամբողջ ստեղծագործությունը հասու լինի բոլորին»:

Երեկոն եզրափակվել է Գարեգին Զաքոյանի՝ «Համո Բեկնազարյան. մենախոսություն» ֆիլմի ցուցադրությամբ, որը Բեկնազարյան մեծ անհատի կյանքի ու գործի վավերագրությունն է:

Հայաստանի մշակութային ժառանգությունը՝ Հնդկաստանում

Հնդկաստանի Ֆահիրդաբադ քաղաքում մեկնարկել է Սուրաշկուդի արհեստների 36-րդ միջազգային փառատոնը:

Հայաստանից փառատոնին մասնակցում են «Հովհաննես Շարաֆբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ-ի «Արար. ազգային մշակույթի պահպանումը, տարածումը, զարգացումն ու հանրահռչակումը Հայաստանի Հանրապետության մարզերում» ծրագրում ընդգրկված վարպետներ՝ ասեղնագործուհի Արմինե Խաչատրյանը (ՀՀ Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք), կարպետագործության ուսուցիչներ Զարուհի Դուլվախյանը (ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք) եւ Նարինե Պողոսյանը (ՀՀ Կոտայքի մարզ, Արվյան քաղաք):

Ցուցադրությունը հիմնականում ներկայացնում է հայկական գործվածքը (կարպետներ, ասեղնագործ աշխատանքներ, դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ): Իրականացվում են ձեռագործ աշխատանքների վարպետության դասեր:

Հայկական ավանդական երգերի եւ պարերի կատարումներով փառատոնին մասնակցում է նաեւ «Նուբար» հայ ավանդական երգի-պարի խումբը:

Սուրաշկուդի արհեստների ամենամյա փառատոններին Հայաստանի ներկայացուցիչների շարունակական մասնակցությունն ամրագրված է 2022 թ. հուլիսի 4-ին երեսնում կայացած «Առեւտրի, տնտեսական, տեխնոլոգիաների, գիտության, կրթության եւ մշակույթի բնագավառներում հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի 8-րդ նիստի արձանագրության» դրույթներում: Այն ուղղված է Հայաստանի եւ այլ երկրների ժողովրդական ստեղծագործողների միջեւ համագործակցության նոր հեռանկարների ձեւավորմանը, ժողովրդական ստեղծագործության ճանաչելիության բարձրացմանն ու փոխհարստացմանը, ինչպես նաեւ Հնդկաստան-Հայաստան մշակութային համագործակցության խթանմանը՝ որպես հնդկ եւ հայ ժողովուրդների մշակութային ժառանգության պահպանության լավագույն դրսեւորում:

Սրբոց Վարդանանց

Մայր Աթոռ

Տեառնընդառաջ

սկիզբը՝ էջ 1

Սուրբ Ղեւոնդյանց անվան տակ ճանաչվում են այն հոգեւորականները, ովքեր Վարդանանց պատերազմից հետո, Ատրորմիզդ մարզպանի դրոշմով, պարսից Յարգկերտ Բ-ի հրամանով ձերբակալվում են՝ Հայոց երկիրն ապստամբական նոր խլրտուններին գերծ պահելու համար, եւ տարվում Ապար աշխարհի Նյուշապուհ բերդը: Այնտեղ նրանց առաջարկվում է ընդունել մագդեղեկական կրօնը՝ իրենց կյանքը փրկելու համար: Ղեւոնդյանք մերժում են այդ առաջարկը եւ նահատակվում: Պատմությունը հիշում է նրանց անունները: **Հովսեփ կաթողիկոս, Սահակ եպիսկոպոս, Ղեւոնդ երեց, Մուշե քահանա, Արշեն երեց, Քաջաջ սարկավագ:** Սրանց հետ էին նաեւ **Աբրահամ եւ Խորեն երեցները**, որոնց ականջները միայն կտրելով ազատ են արձակում՝ տարագրության մեջ ապրելու պայմանով: Որոշ ժամանակ անց, չդիմանալով Ատրեստանի տոթակեզ եղանակներին, Խորենը մահանում է: Աբրահամը հետագայում թուլտվություն է ստանում հայրենիք վերադառնալու եւ ձեռնադրվում է Բզնունիքի եպիսկոպոս: Նրան է վերագրվում ասորական հայտնի «Վկայք Արեւելից» երկի հայերեն թարգմանությունը:

... **428թ.** Հայաստանում վերացվեց **Արշակունյաց** թագավորությունը: Հայաստանի՝ պարսկական տիրապետությանն անցած մասը դարձավ **մարզպանություն**, եւ մարզպան նշանակվեց **Վասակ Սյունին:** Պարսից թագավոր **Հազկերտը՝ Վռամի** որդին, խիստ մոլեռանդ էր իրենց կրօնի օրենքները պահելու հարցում եւ 449թ. մի հրովարտակ է հրապարակում, որով տերության սահմաններում գտնվող բոլոր հպատակներին պարտադրվում է **գրադաշտական** կրօնը (կրակապաշտություն):

Այս ընթացքում հայ նախարարները, սպարապետ **Վարդան Մամիկոնյանի** եւ կաթողիկոս **Հովսեփ Հողոցմեցու** գլխավորությամբ, Արտաշատում ժողով են գումարում, որտեղ Հազկերտին պատասխան են գրում. «**Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ոչ հրեշտակները, ոչ մարդիկ, ոչ սուրը եւ ոչ հուրը, ոչ ջուրը եւ ոչ էլ որեւէ այլ դառն հարված: Մեր ամբողջ գույքն ու ստացվածքը քո ձեռքում են, եւ մեր մարմինները քո առաջ են, քո կամքի համաձայն արա՛, ինչ ուզում ես: Եթե այս հավատի մեջ թողնես, ոչ երկրի վրա ուրիշ տեր կընդունենք քո փոխարեն եւ ոչ էլ երկնքում ուրիշ Աստված՝ Հիսուս Քրիստոսի փոխարեն, Որից բացի ուրիշ Աստված չկա»:**

Պատասխանը խիստ զայրացնում է Հազկերտին, եւ 451թ. գարնանը պարսկական զորքը, **Մուշկան Նյուսապավուրտի** գլխավորությամբ, մտնում է Հայաստան եւ հասնում Արտազ գավառ՝ բանակ դնելով **Տղմուտ** գետի աջ ափին: Պարսկական զորքը 200 հազար էր՝ հայկականից 3 անգամ ավելի: **Մայիսի 25-ին** զորքերը պատրաստվում են վճռական ճակատամարտի: Հոգեւորականները մկրտում են չմկրտված անձանց: Բոլորը **Սուրբ Ավետարանի** վրա երդումով միաբանվում են, որով Հայոց բանակատեղին նմանվում է շարժական եկեղեցու: **Սուրբ Ավագանով, Ավետարաններով, խաչերով, սրբերի նշխարներով եւ անգամ եկեղեցական նվիրապետությամբ՝ կաթողիկոսից մինչեւ սաղմոսասաց: Մայիսի 26-ին** սկսվում է ճակատամարտը: **Ավարայրում** հերոսաբար մարտնչելուց հետո իր գինվորների հետ ընկնում է **Վարդանը** եւ նրա հետ երեւելի նախարարներ՝ իրենց տոհմակից ազնվականներով՝ **296** հոգի...



Հայ եկեղեցին երախտագիտությամբ սրբացրել է **Ավարայրի 1036** նահատակներին՝ **Վարդան Չորավարի** գլխավորությամբ: Ցավոք սրտի, պատմությունը չի պահել բոլորի անունները: Հայտնի են միայն 9 զորականները.

1. **Քաջ Վարդան Մամիկոնյան՝ 133** համհարզներով,
2. **Կորովի Խորեն Խոռխոռունի՝ 19** ընկերներով,
3. **Արի Արտակ Պալունի՝ 57** ընկերներով,
4. **Չարմանալի Տաճատ Գնթունի՝ 19** ընկերներով,
5. **Իմաստուն Հմայակ Դիմաքսյան՝ 22** ընկերներով,
6. **Հրաշակերտ Ներսես Քաջբերունի՝ 7** ընկերներով,
7. **Մանուկ Վահան Գնունի՝ 3** ընկերներով,
8. **Արդար Արսեն Ընծայունի՝ 7** ընկերներով,
9. **Առաջադեմ Գարեգին Սրվանձտյանց՝ 2** եղբայրներով **եւ 18** ընկերներով:

Վարդանանց քաջերին **Սուրբ Ներսես Շնորհալի** հայրապետը ձոնել է «*Նորահրաշ*» շարականը՝ ամեն քառատող սկսելով նահատակ մի իշխանի անունով: Ճակատամարտին մասնակից էին նաեւ հոգեւորականները, ովքեր իրենց անմնացորդ ծառայությունը մատուցեցին Հայ եկեղեցու, հավատքի ու հայրենիքի պաշտպանությանը: Նրանցից էին **Սուրբ Ղեւոնդյանցները: Սուրբ Ղեւոնդյանց մարտիրոսությունը** տեղի ունեցավ **Սուրբ Վարդանանց նահատակությունից** երեք տարի երկու ամիս հետո, բայց եկեղեցական տոնացույցի մեջ սկզբում է դրված **Ղեւոնդյանց տոնը՝** իբրեւ **Վարդանանց պատերազմի** գաղափարախոս նախապատրաստողների:

Բուն բարեկենդան

«*Բարեկենդան*» նշանակում է բարի կենդանություն, ուրախություն, խրախճանք, առատ ուտելիքներով վայելքի օր: Գլխավոր շաբաթապահեքերին նախորդող կիրակի օրը կոչվում է բարեկենդան, եւ այդ առթիվ թույլատրվում է մի փոքր ավելի ուտել: Սակայն, բարեկենդանների մեջ հատկանշական է Մեծ Պահքի նախընթաց կիրակի օրը (այս տարի՝ **փետրվարի 19-ին**), որ կոչվում է Բուն Բարեկենդան: Այս օրը մարդիկ վայելում են առատ ուտելիք՝ ճոխ սեղաններ պատրաստելով ու զանազան խրախճանքներ կազմակերպելով: Արեւմուտքում Բարեկենդանը՝ իրենց լեզվով «*Կարնավալ*»-ը, նշվում է բացառիկ շուքով եւ հանդիսությամբ: Տեղի են ունենում զանազան տոհմացքներ ու ցուցադրություններ, ինչպես նաեւ՝ ժողովրդական խրախճանք:

Մեծ պահքի շրջան

Հայ եկեղեցու ծիսակարգի համաձայն՝ Բուն Բարեկենդանին հաջորդող երկուշաբթիից (այս տարի՝ **փետրվարի 20-ից**) սկսվում է Մեծ Պահքի շրջանը: Այն տեսում է քառասուն օր՝ մինչեւ Ծաղկազարդի կիրակիին (այս տարի՝ **ապրիլի 2-ին**) նախորդող շաբաթ օրը, որին հաջորդում է պահոց մի շրջան եւս՝ Ավագ Շաբաթվա Պահքը, որի ընթացքում եկեղեցին պատրաստում է հավատացյալ ժողովրդին արժանավորապես եւ մեծագույն երկյուղածությամբ մոտենալու Սուրբ Հաղորդության Սեղանին՝ հռչակելով մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության ավետիսը (այս տարի՝ **ապրիլի 9-ին**): Պահքի այս շրջանում սահմանափակում է դրվում սննդի որոշ տեսակների վրա, հիմնականում՝ կենդանական ծագում ունեցող, փոխարինելով այն «*ճաշի*» այլ տեսակներով՝ ավելի հարուստ ու սննդարար, անանց ու պտղաբերող, որոնք ավետարանական պատգամներն ու առակներն են: Մեծ Պահքի շրջանի գրեթե բոլոր կիրակիներին, ըստ Հայոց Տոնացույցի, ավետարանական առակներ են ընթերցվում, որոնք քրիստոնյայի համար զարթուցիչ կոչմանի դեր պիտի կատարեն: Այդ կոչմանը եկեղեցու զանգերի նման հավատացյալներին հրավիրում է արթուն կյանքի: Այս շրջանում է, որ յուրաքանչյուր ոք փորձում է զղջունով ու ապաշխարությամբ մեղքից հեռանալ ու մաքրվել եւ «*իմաստուն կույսերի նման*» միշտ պատրաստ լինել: Լեռան քարոզում Քրիստոս պատվիրում է «*կատարյալ լինել, ինչպես մեր երկնավոր Հայրը եւ կատարյալ*» (Մատթ. 5:48): Պահքի շրջանն այդ առումով նաեւ կատարելության, ներքին ներդաշնակության տանող մի շրջան է. այն, ինչ կորցրեցին մեր նախածնողները Եդեմական պարտեզում, Քրիստոս մեզ վերադարձրեց: Աստծո պատկերն ու նմանությունն այդ կատարելություններն են, որոնց ձգտելով՝ քրիստոնյան կարող է Վերջին փողի հնչելու ժամանակ Պողոս առաքյալի խոսքերով ասել. «*Բարի պատերազմ մղեցի, ավարտեցի կյանքիս ընթացքը, պահեցի հավատը: Այսուհետ ինձ մնում է միայն սպասել արդարության պատկեր, որ Տերը՝ արդար Դատավորը, իբրեւ հատուցում, ինձ կտա դատաստանի օրը: Եվ կտա ոչ միայն ինձ, այլ նաեւ բոլոր նրանց, ովքեր սիրով սպասում են Տիրոջ հայտնվելուն*» (Բ Տիմ. 4:7-8): Անեն մի հավատացյալի համար պահքի շրջանը մեղքի կրակոտ նետերից ազատվելու առիթ է: Ինչպես Ադամը մեղանչելուց հետո չխոստովանեց ու պատուհասից չազատվեց, այնպես էլ ամեն ոք, եթե մեղանչելուց հետո չխոնարհվի իր անձը՝ խոստովանելով իր մեղքերը, դրանց պատուհասներից չի խուսափի: Պահքով եւ աղոթքով քրիստոնյան ի գորու է չարի փորձություններին դիմանալու եւ հաղթանակած դուրս գալու:



Փետրվարի 14-ին 40-օրյա մանուկ **Հիսուս Քրիստոսի** տաճարին ընծայման տոնին **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդ** Ծայրագույն Պատրիարք է Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Սուրբ Գայանե վանքում մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագին էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն **Հոգեշնորհ Տեր Ջաքարիա ծայրագույն վարդապետ Բաղումյանը:** Իր քարոզում Հայր Սուրբն անդրադարձավ տոնի խորհրդին մարդ եւ Աստված հանդիպման կարեւորությանը: Սրբազան արարողության ավարտից հետո, հանդիսապետությամբ Մայր Աթոռի լուսարարապետ **Գերշնորհ Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի,** կատարվեց նորաստեղծ գույզերի օրհնության կարգ: Այնուհետեւ **Գարեգին երկրորդ** Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի տարբեր կառույցներում սպասավորող նորաստեղծ սարկավագներին: Հայոց Հայրապետը երիտասարդ գույզերին մաղթեց սիրելիություն, լինեն միմյանց սիրող ու կարեկից, եւ աստվածային խաղաղությունն ու սերը մշտապես անպակաս լինեն իրենց նորակազմ ընտանիքներից:

Խաչատուր ԱՐՈՎՅԱՆ

«Վերք Հայաստանի»

Գլուխ առաջին (հատված վեպից)

Բարեկենդան էր: Ձիսն էկել, դիզվել, սար ու ձոր բռնել էր: Պարզըկա գիշերը է՛նպես էր գետինը սառցորել, որ ամեն մեկը ոտը կոխելիս հազար տեղից տրաքտրաքում, ծռծռում, ճքճքում էր ու մարդի ջանը սրտացնում, ձեն տալիս: Ամեն մեկ ծառի ճղքներից, ամեն մեկ տան բաշից հազար տեսակ սառցի լուլա, հազար տեսակ ձնի քուլա կախ էր էլել ու բիզ-բիզ իրար վրա սառել: Դենց գիտես՝ սար ու ձոր կամ նո՛ր էր ծաղկել, կամ նո՛ր ծերացել, մահվան դուռն ընկել՝ շունչն էր մնացել, որ տա ու աշխարհիս բարով մնա ասի: Դուռ, գազան, անասուն, սողուն՝ որը փետացել, էստեղ-էնտեղ վեր էր ընկել, որն էլ վաղուց, ամսով առաջ բունը մտել, ձենը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն սպասում: Գետերի, առվների երեսները սառիցը մեկ գագ էկել, հաստացել, իրար վրա դիզվել, էնպես էր ջրի, աղբրի բերնին հուլ տվել, որ մոտըներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձենն էր լսում, որ սառցի տակին տխուր, տրտում ըլլում էր ու էլ ետ էստեղ-էնտեղ կամաց-կամաց ձենը կտրում, պապանձվում, սառչում:

Արեգակը էս առավոտ որ գլուխը քնի տեղիցը ու աղոթարանիցը չի՛ բարձրացրեց ու աչքը աշխարհի վրա քցեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի գլխին է՛նպես էր պեծին տալիս, պսպղում, փայլում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս, որ հենց իմանաս, թե ավագ, գմռութ, յախութ ու հազար տեսակ-տեսակ անգին քարեր ըլեին դաշտերի, սարերի գլխին, երեսին, դռնին փռած: Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին է՛նպես էր մեյդան բաց արել, գոռում, փչում, հոսան անում, ձնի թեփը իրար գլխով տալիս, որ ծամփորդի քիթ ու պոռունկը կպցնում, ծաքացնում, երեսը պատռում, գլխին, երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շատին կամ ձորերն էր քցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փետացրած՝ ծամփից խռկում, սար ու չուքցում, խեղդում կամ քարեքար տալիս:

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ձմեռվա իրիկունը

Թարգմանություն Ա.Ս.Պուշկինից

Հողմը մեզով երկինքն առնում, Գալարում է բուքը ձյան, Մին՝ մանկան պես լաց է լինում, Մին՝ ոռնում է գերթ գագան. Մին՝ վայրենի սուլում պես-պես, Աղմըկում է տանիքում, Մին՝ ուշացած ծամփորդ, ասես, Լուսամուտն է նա թակում:

Մեր խրճիթը, աղքատ ու հին, Ե՛վ մըթին է, ե՛ւ տըխուր. - Ի՞նչ ես նըստել պատի տակին, Իմ պառավըս, էդպես լուռ: Հոգնե՛լ ես դու փոթորիկի Ոռնոցներից խելագար, Թե՞՞ նիրհում ես քո իլիկի Բըզզոցի տակ միալար:

Արի խմե՛նք, բարի ընկեր, Իմ սեւ, ջահել օրերի, Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր, Սիրտներըս բաց կը լինի: Երգի՛ր, ո՞նց էր ապրում խաղաղ Հավքը ծովի էն ափին, Երգի՛ր, ո՞նց էր աղջիկը վաղ Ջուրը գնում մինչ արփին:

Հողմը մեզով երկինքն առնում, Գալարում է բուքը ձյան, Մին՝ մանկան պես լաց է լինում, Մին՝ ոռնում է գերթ գագան: - Արի խմե՛նք, բարի՛ ընկեր Իմ սեւ, ջահել օրերի, Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր, Սիրտներըս բաց կը լինի:

Եղիշե ՉԱՐԵՆՑ

Ինչքան որ հուր կա իմ սրտում՝ բոլորը քեզ. Ինչքան կրակ ու վառ խնդում՝ բոլորը քեզ. Բոլո՛րը տամ ու նվիրեմ, ինձ ո՛չ մի հուր թող չմնա՝ Դու չմրսես ձմռան ցրտում՝ բոլո՛րը քեզ...



Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ Առաջին ձյունը

-Վա՛յ մայրի՛կ ջան, տե՛ս, Բակն ու դուռը լի Ինչքա՛ն ըսպիտակ Թիթեռ է գալի... Եսքան շատ թիթեռ Չեմ տեսել ես դեռ: - Չէ՛, իմ անուշի՛կ, Թիթեռներ չեն էդ. Թիթեռներն անցան ծաղիկների հետ: Էդ ձյունն է գալի, Փաթիլն է ձյունի, Որ կարծես սպիտակ Թիթեռնիկ լինի:

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

Վայում է քամին՝ ցուրտ, ձմեռնամուտ, Չոր տերեւները շուրջս է դիզում. - Ո՛վ է իմ սիրտը տրորում անգութ, Սեւ մազերիս մեջ ձերմակ է հյուսում:

Ձյունը պատանքով ծամփես է ծածկում, Սիրտս գերեզման՝ մռայլ եւ անհույս, ... Հատ-հատ իմ թաղման զանգերն են գարկում, Ու մի սիրտ վրաս լալիս է քնքուշ...

Համո ՍԱՀՅԱՆ

Ձմեռնամուտ

Արագած սարն է ամպի մեջ լռել, Եվ թելերն ամպոտ հողմերը նրա Մի բեկոր ձմեռ դաշտերից բերել Շաղ է տվել թաց մայթերի վրա:

Ցուրտ քամիներն են սուրում սարերից, Բայց իր գարնան մեջ սիրտս այնքան է տաք, Որ չի տարբերում ձյուն է ոտքիս տակ, Թե՞՞ ծաղիկներ են թափվել ծառերից:


Շուշանիկ ԿՈՒՐԴԻՆՅԱՆ

Փաթիլն ուզեց

Փաթիլն ուզեց ինձի գգվել, գուրգուրել. Իմ թշերը պաղ շուրթերով համբուրել. - Ես գարուն եմ, դու ցուրտ ձմեռ, ա՛յ փաթիլ. Թո համբուրից դու կը դառնաս խեղճ կաթիլ:

Սառ հողի տակ մի օր կը հանգչեն ես արձակ. Իջիր վրաս երբ կամենաս համարձակ. Իմ սեւ թմբից էլ չես հալչի, ա՛յ փաթիլ, Անջերմ, անկյանք ես կը դառնամ խեղճ կաթիլ:

Տիեզերքի տապ ու կիզող համբուրից Որպես ծաղիկ թոշնած ու զուրկ եմ բուրից. Ողջըս դանդաղ պիտի հյուսվի ու հալչի Ոչ մի շրթի համբուրյուն էլ ինձ չի դիպչի...





Վահան ՏԵՐՅԱՆ

Ձմռան գիշեր

Տխրությունն անուշ է, որպես
Յեռավոր, հեռավոր կարկաչուն.
Այնպես մեղմ է իմ սերն ու այնպես
Անուշ է նա իմ սիրտը տանջում:

Չեմ ուզում ոչ անցյալը հիշել,
Ոչ գալիք օրերին նետել հույս,
Յանգիստ է իմ շուրջը եւ գիշեր,
Ու սիրտըս չի տենչում արշալույս:

Անդորրել է աշխարհը բոլոր,
Դուրսը ծյուն է գալիս, փողոցում
Գիշերը եւ հանգիստ է, եւ խոր,
Ու սիրտըս առավոտ չի ուզում:

Մաքուր է իմ հոգին, ու հիմա
Օրհնում եմ վիճակըս երկրային,
Ընդունում եմ սիրով կյանք ու մահ
Ու սիրտըս պարզում եմ աշխարհին...

Անչար է իմ հոգին ու հանգիստ,
Գիշերը անդորր է, դուրսը ծյուն.
Ննջեցե՛ք հավիտյան, վերք ու վիշտ,
Ծավալվի՛ր, լուսեղեն մենություն...

Գուրգեն ԲՈՐՅԱՆ

Ձմռան երգ

Տեսե՛ք, տեսե՛ք,
Ձյուն է գալիս
Փաթիլ-փաթիլ,
Սպիտակ,
Անտառ ու դաշտ,
Փողոց ու տուն
Առել իրեն
Գորգի տակ:

Ջան, ջա՛ն ձմեռ,
Յագար բարով,
Ինչ ուրախ եմք
Մենք այսօր,
Չնագնդի
Ու ձնե մարդ
Մենք կշիներք
Ամեն օր:

Քո նվերը,
Սպիտակ է,
Ճերմակ, փափուկ,
Գեղեցիկ,
Տե՛ս, ինչքան լավ
Պար են բռնել
Օդում՝ ինչպես
Թիթեռնիկ:

Տեսե՛ք, տեսե՛ք,
Ձյուն է գալիս
Փաթիլ-փաթիլ,
Սպիտակ,
Անտառ ու դաշտ,
Փողոց ու տուն
Առել իրեն
Գորգի տակ:

Վահան ԹԵՔԵՅԱՆ

Ձյունը

Օ՛հ, հանդիպո՛ւմըս քեզի, ձյունին ներքեւ, այն գիշեր,
Թեթեւ ու լուռ՝ երկինքն իջնող ձյունին, հարսի պես...
Տարի մ'ամբողջ ես փախեր էի քեզմե, քեզ սիրեր,
Ու միայն ձյունը հիմա զիս կը մղեր դեպի քեզ...

Որքա՛ն գորով, զմայլանք, արգահատանք ու տենչանք
Քեզի համար տակավի՛ն հոգիս մեջ ունեի.
Որքա՛ն հրձվանք խաբուսիկ եւ իրական տառապանք՝
Արթնության մեջ ու քրնի քեզմե եկած էր ինձի...

Եվ հիմա դո՛ւն էիր, դո՛ւն որ ձյունին տակ, ինձի հետ
Կը խոսեիր շունչ շունչի, ու կուտայիր ինձ վաղվան
Յույսը գարուն երկնքին, պարտեզներուն ծաղկավետ...

-Եվ դողալով գացի տուն... Բայց իրոք դո՛ւն էիր ան.
Ձայնդ ու խոստումը՝ դ՛ի նչպե՛ս զքեզ տարբեր կ'ընեին.
Ստուգության մեջ ինչպե՛ս կ'որոնեի հույսս հին...



Մատթեոս ԶԱՐԻՖՅԱՆ

Կը ձյունե

Յոգիս կեսգիշեր մ'է ձմեռային,
Ուրկե տակավին երկինք կընային
Յիվանդ ու անտեր
Քանի մը լապտեր...

Բայց ալ կը ձյունե՛ ճամբուն վրա Յույսին
Ուր հոգի տվող սերեր կը մըսին:
Սեւ ճամբորդ մ'հեռվեն
Կուգա համորեն...

Գուրգեն ՄԱՅԱՐԻ

Ձմեռ

Թափվի՛ր, ճերմակ, թափվի՛ր, ձյուն,
Թափվիր իմ սրտում,
Ծածկիր անտառ ու կածան,
Ջրադացը հին, հյուղ ու ծառ,
Գյուղակն իմ սրտում:

Թափվիր դանդաղ ու թեթեւ,
Այսպես թափվում էիր դու,
Երբ ես ջահել էի դեռ
Յույզերով հորդուն:-
Այսպես թափվում ես հիմի,
Յանդիսավոր ու հանգիստ,
Ասես պարիսպներին հին
Յայկական վանքի:

Թափվիր, փռվիր իմ սրտում,
Ճերմա՛կ երագ, ճերմա՛կ ձյուն...

Պարույր ՍԵՎԱԿ

Վառարանի առաջ

Իսկ քարածո՛ւխը...


Երբ նա վառվում է
Ձմեռվա ցրտին,
Յին վառարանում,
Եվ ձյունն է դրսում կրկնում ինքն իրեն,-

Լինում է այնպես,
Որ՝ մեկ էլ տեսար՝
Սոսափն եմ լսում ա՛յն անտառների,
Որոնք բյուրիազար տարիներ հետո
Այս քարածուխին պիտի վերածվեն.
Եվ գագանների ոռնոցն եմ լսում
Այդ անտառների անեզրության մեջ.

Եվ ձայնը նաեւ
Իմ նախա-նախա-նախապապերի,
Որ դրս են անում այդ անտառներում,
Որ մերկանդամ են
Եվ ունեն դեռ պոչ,

Բայց անկարող են այլերս ապրել
Լռին խավարում կույր անձավների,
Ինչքան էլ դրանք թվան ապահով:

Ու հասկանում եմ,
Որ սերվել եմ ես
Դե՛ռ այն ժամանակ, հե՛նց այն ժամանակ...



Փոճիր մտապահել


սկիզբը՝ «Կրթություն», թիվ 4, 23.11.2022թ.

177) Անվերջություն

«Ու գնում է ժամանակը... Ու փոխվում է ամեն ինչ: Այն, ինչ թանկ էր մի ժամանակ- Չիմա դարձել է ոչինչ»:

Պ. Սեւակ

Անվերջությունը մաթեմատիկական վե-րացարկում է, որը ծագում է այն ենթադրու-թյունից, որ տարածությունը սահմաններ չունի: Դա ինչ-որ տեղ նման է հորիզոնին, որը, իբր թե կա, բայց նրան հասնելն անհ-նար է:



Մաթեմատիկորեն անվերջությունն ար-տահայտվում է իռացիոնալ թվերի գոյու-թյան մեջ: Այսինքն թվեր, որոնք չեն կարող ներկայացվել այնպիսի կոտորակի տես-քով, որում համարիչն ամբողջ թիվ է, հայ-տարարը՝ բնական: Այդպիսի թվեր են պի-ն, բնական լոգարիթմի I հիմքը եւ այլն: Այլ կերպ՝ իռացիոնալությունը թվի գրառման մեջ ամբողջ մասին հաջորդող ստորակե-տից հետո անհամար թվանշանների գոյու-թյունն է: Բայց մաթեմատիկան մեր գիտակ-ցության կողմից ստեղծված գործիք է՝ աշ-խարհը նկարագրելու համար: Աշխարհն էլ այնպիսին է, որ անվերջության գաղափա-րը հնարավորություն է տալիս առավել ճշգրիտ նկարագրել նրա կառուցվածքը:

Ֆիզիկորեն անվերջությունը նշանա-կում է աշխարհում առկա, անվերջի ձգտող երևույթներ, որոնք կրկնվելու օրինաչափու-թյուն ունեն: Օրինակ՝ ջրի շրջապտույտը, ատոմների կողմից լույսի թվանոսի կլա-նումն ու ճառագայթումը եւ այլն:

Տիեզերքի անվերջությունը թխում է տա-րածության անընդհատությունը: Տարա-ծության յուրաքանչյուր կետ իր շրջակայքն ունի, որը կազմված է տարբեր կետերից, եթե անցում կատարենք այդ կետերից մեկը, նա էլ իր շրջակայքի կետերը կունենա եւ այդպես շարունակ:

Փիլիսոփայության մեջ անվերջությունը մատերիայի, նրա շարժման ու զարգաց-ման ժամանակի եւ տարածության անսահ-մանությունն ու նրա անսպառելիությունը բնութագրող հասկացություն է: Միկրոաշ-խարհում մատերիայի բաժանման անվեր-ջությունը պետք է դիտվի որպես նրա ան-վերջ փոխակերպումների հնարավորու-թյուն:

Անվերջությունում ամեն ինչ անընդհատ շարժվում ու փոփոխվում է. սա բնության թերեւս ամենակարեւոր օրինաչափու-թյունն է: Բայց ինչո՞ւ է դա այդպես:

Չարժան մոտենանք զուտ մաթեմատի-կորեն: Շարժման չափը արագությունն է: Նյութական մարմինն անշարժ է, եթե նրա արագությունը զրո է, եւ համարվում է շարժվող, եթե արագությունը զրոյից տար-բեր է: Այդ սահմանումից հետեւում է, որ ան-

Բանաստեղծներն են հուշում

շարժ մարմնի արագությունների տարբե-րակների թիվը հավասար է մեկի (երբ արա-գությունը զրո է), մինչդեռ շարժվող մարմ-նի արագությունների տարբերակների թիվն անվերջ բազմություն է: Այդ դեպքում, հավանականությունն այն բանի, որ տիե-զերքում մարմնին անշարժ է, հավասար է զրոյի (դա ստացվում է այսպես. զրո արա-գությամբ տարբերակների թիվ՝ բաժանած բոլոր հնարավոր արագությունների տար-բերակների ընդհանուր թվի վրա, նույնա-բար հավասար է 1-ը բաժանած անվերջի, ինչը տալիս է զրո): Այսինքն անշարժ օբ-յեկներ ողջ տիեզերքի անվերջության մեջ՝ չկան:

Եթե դու այժմ հանգիստ նստած ես ձեր տան բազմոցին ու անթաքցնում ես պա-տի ժամացույցին, ֆիքսիր, որ հենց այդ պահին քո բազմաթուղվ երկրի հետ Արե-գակի շուքն ես թռչում-վազում 30 կմ/ժամ արագությամբ:

... Նկարում՝ անվերջության նշանը մա-թեմատիկայում:

Եթե յուրաքանչյուր օր, ճիշտ նույն ժա-մին լուսանկարեք Արեգակի դիրքը երկն-քում, հետո բոլոր կադրերը միավորեք, մի տարի հետո կստանաք ձգված ութնյակ (անվերջության նշանը մաթեմատիկայում): Այդ պատկերի վերին կետում Արեգակը ամառային արեւադարձում է, ստորին կե-տը՝ ձմեռային արեւադարձի դիրքն է: Պատ-կերի նման ձեւը երկրի ուղեծրի էլիպսայ-նության եւ նրա նկատմամբ մոլորակի պտտման առանցքի թեքության համադրու-թյան արդյունք է:

178) Բուրգ

«Կարավաթերթի գլխին տարին բո-լոր ամպ է նստում, բերդի ատամնածեւ պարիսպները կորչում են ամպերի մեջ, միայն սեւին են տալիս բարձր բուրգերը: Չեռվից ավերակները չեն երեսում, եւ այնպես են թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, զոց են պարանքի երկաթե դռները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու քարափը բարձրացողին»:

Ա. Բակունց

«Եգիպտական բուրգերը փոշի կդառնան՝ Արեւի պես, երկիր իմ, կվառվեն վառման»:

Վ. Տերյան

Բուրգը բազմանիստ է, որի նիստերից մեկը կամայական բազմանկյուն է, իսկ մյուս նիստերը եռանկյուններ են, որոնք ու-նեն ընդհանուր գագաթ: Չետաքրքիր է եվկ-լիդեսի սահմանումը. բուրգը մի մարմին է, որը սահմանափակված է հարթություննե-րով, որոնք սկիզբ են առնում մեկ հարթու-թյունից եւ հատվում են մեկ կետում:

Բուրգի ծավալը հայտնի էր հին եգիպ-տացիներին, ովքեր ստեղծեցին նաեւ բուր-գի ճարտարապետությունը՝ գիտության եւ մշակույթի վիթխարի նվաճում, հին աշ-խարհի հրաշալիքներից մեկը: Դրանք հա-վաքական քարե շինություններ են, որ կա-ռուցում էին թագավորների՝ փարավոնների համար: Եգիպտացիները հավատում էին, որ մարդ մահից հետո եւս ապրում է: Եգիպ-տական լեգենդը պատմում է, որ բուրգը փարավոնի տունն է նրա մահից հետո:

Կահիրե քաղաքի արվարձանում է Գի-զայի բուրգային համալիրը, որի մեջ է նաեւ Մեծ Սֆինքսի հսկայական արձանը, աշ-խատավորների գյուղը եւ արդյունաբերա-կան համալիրը: Գիզայի բուրգային համալի-րի երեք բուրգերի գագաթները ճշտորեն համընկնում են Որսորդ համաստեղության երեք վառ աստղերի հետ: Բուրգերի ներ-սում միշտ նույն ջերմաստիճանն է, իսկ դրանցից մեկի մեջ առեղծվածային ձայներ են հնչում: Առեղծված է նաեւ այն, թե վիթ-խարի կառույցները ինչպես են ստեղծվել



հեռավոր ժամանակներում:

Շատերն համարում են, որ Գիզայի մեծ բուրգը ամենահինն է: Բայց կան ավելի հիները: Ջուների աստիճանածեւ բուրգը կա-ռուցվել է մոտ 4700 տարի առաջ՝ Երրորդ դինաստիայի ժամանակ:

Կառույցն անձամբ հսկում էր Ջոսերը, իսկ ճարտարապետը Իմխտեպն էր: Մարդ, ով հեղափոխություն կատարեց Եգիպտոսի ճարտարապետությունում ու զարմացնում է մեզ նաեւ մեր օրերում: Եգիպտոսը մինչ այդ չէր տեսել այդպիսի բան: Բուրգն ամ-բողջովին կառուցված է կտրված շինարա-րական բլուկներից, այդպիսով դառնալով պատմության առաջին խոշոր հուշարձանը:

Շինարարությունը տեւել է 19 տարի, մասնակցել են վիթխարի թվով մարդիկ: Այ-սելով քառակուսային մասշտաբից, Իմխտ-եպը աստիճանաբար հավասարաչափ մեծացրել է կառույցը բոլոր 4 կողմերից: Շինարարության յուրաքանչյուր փուլ ներ-կայուն ճարտարապետության պատմու-թյան մեջ համարվում է փորձարարական:

Իրականում, Եգիպտոսում բացակայում են քառակուսային մասշտաբները, իսկ հիշ-յալ կառույցը վիթխարի էր զբաղեցրած մա-կերեսով՝ 15 հեկտար: Բայց շատ ավելի զարմանալի են այն է, ինչ կա կառույցի տակ: Դա մի ամբողջ քաղաք է՝ չափազանց տպավորիչ, մի ողջ մեգապոլիս, որ գետ-նուղիների ցանց ունի, խցեր, սենյակներ, 6 կմ երկարությամբ լաբիրինթոս: Եգիպտա-գետները համոզված են, որ այդ ստորերկր-յա աշխարհը թագավորական ընտանիքի հոգիների պալատներն էին:

Բայց կա մի անհասկանալի հարց. եթե Ջոսերի աստիճանածեւ բուրգը ոգեւորել է հինեգիպտական ճարտարապետներին կառուցելու այլ բուրգեր, ինչո՞ւ նրանք էլ չեն կառուցել ստորգետնյա համալիրներ ուրիշ բուրգերի տակ:

Կենտրոնական Ամերիկայի աստիճա-նածեւ վիթխարի բուրգ-տաճարներով է հայտնի Չայների պալատը (Գվատեմալա): I-VI տաճարներ կոչվող աստիճանածեւ վիթխարի ու փառահեղ բուրգ-տաճարները մայա ցեղի հնագույն քաղաքակրթության հուշարձաններ են:

... Նկարում՝ Ջոսերի բուրգը Եգիպտո-սում:

179) «Մի պղպջակ-արկած»

(Ռազմիկ Դավոյան)

Յուրաքանչյուրն է թերեւս ուրախու-թյուն ապրել՝ դիտելով բնության այդ փոք-րիկ հրաշքը պղպջակը, ու փորձել հասկա-նալ, ինչ կա նրանում թաքնված: Մարկ Տվենն այսպիսի խոսք ունի. «Օճառի պղպ-ջակը, թերեւս, բնության ամենախիստաքան- ճառն է»: Այնուհայտ է հայտնի գրողն ինչպես է ընթռչիսնել այդ նր-բին գեղեկությունը: Պղպջակի երևույթի թողած զգացմունքը՝ «շատ բարի ու շատ հուսալի սկիզբ է բնության հետագա ու-սումնասիրման համար» (Յա. Գեգուզին, ֆիզիկոս):

Պղպջակը օդով կամ գազով լցված բա-րակ թաղանթով գնդիկ է, որ առաջանում է որեւէ հեղուկի մեջ:

Դրանցից է օճառի պղպջակը: Դա շատ կայուն կառուցվածք է: Ու եթե հիշենք, որ

շինանյութը հիմնականում ջուրն է, օճառի պղպջակի կայունությունը չի կարող չզար-մացնել: Դրա հիմքում նախ պղպջակի ձեւի ծայրաստիճան պարզությունն ու կատարե-լությունն է: Ջուրը՝ օճառի որոշ հավելումով, ձեւավորում է պղպջակի գնդի բարակ, կա-յուն, բազմազուն թաղանթը:

Պինդ ու հեղուկ մարմինների մակերե-ւույթները հեշտորեն ադսորբում (կլանում) են «օտա», «խառնուրդային» մակերեւու-թային-ակտիվ մոլեկուլներ, որոնք ընդու-նակ են փոքրացնել մակերեւութային էներ-գիան: Որպես այդպիսի խառնուրդ կարող են ծառայել օճառի մոլեկուլները: Դրանք կազմում են երկար շղթաներ, որոնք ունեն մի կարեւոր առանձնահատկություն. նրանց ծայրերը տարբեր կառուցվածք ունեն եւ տարբեր կերպ են հարաբերվում ջրի հետ-մի ծայրը հեշտորեն միանում է ջրին, մյուսը՝ իներտ է ջրի նկատմամբ: Այդ պատճառով էլ օճառի մոլեկուլները ջրի մակերեւութին պետք է շարվեն այնպես, որ ջրի հետ հպ-վեն միայն նրա այն ծայրերը, որոնք ընդ-հանրություններ ունեն այդ հեղուկի հետ: Ջուրը, ամրապնդված օճառի նման մոլե-կուլային շարքով, դառնում է պղպջակի շի-նանյութ: Ջրի թաղանթը, որի մակերեւու-թային էներգիան ցածրանում է օճառի մոլե-կուլների ադսորբցիայի հետեւանքով, դառ-նում է հուսալի, կայուն: Ձեւավորված ճկուն, կանոնավոր դասավորված մոլեկուլ-ների շարքը փաստորեն ոչ թե խառնուրդ է, այլ ջրի ու օճառի եռաշերտ կառուցվածք: Պղտոր օճառաջրի կաթիլից, որն ադսորբ-ցիա չի առաջացնի, պղպջակ չի ստացվի:

Ջրի մեջ պղպջակների բուռն աճ լինում է եռման ժամանակ, որն ուղեկցվում է հե-ղուկի ծավալում գոլորշային բշտիկների կամ խոռոչների ձեւավորմամբ: Դրանք բարձրանում են հեղուկի մակերեւույթ եւ աղմուկով պայթում:



Շարժվող հեղուկների պղպջակներն առաջացնում են մի շարք հետաքրքիր երևույթներ, որոնցից է, օրինակ, «մատնե-րի ճրթճրթոցը»: Դա բացատրվում է գազի պղպջակների առաջացումով եւ ճայթումով. սրանք ձեւավորվում են, երբ հողերի ծա-վալները կտրուկ աճում են: Վերջույթների ծայրերում կա թանձր հեղուկ: Երբ ձգվում է հողը, ճնշման կտրուկ իջեցումը հանգեց-նում է նրան, որ հիշյալ գանգվածի մեջ լուծ-ված գազն առաջացնում է պղպջակներ: Այդ պահին լսվում է ճրթճրթոցը՝ պայմանավոր-ված պղպջակների շատ արագ գոյացումով:

... Մոտ 500 տարի առաջ հանճարեղ Լե-ոնարդո Դա Վինչին նկատեց, որ թեպետ ջրում պղպջակների մեծ մասը վեր է բարձ-րանում ուղիղ գծով, նրանցից որոշները սկ-սում են տատանվել եւ բարձրանալ պա-րույրներով կամ զիգագազմեւ: Այդ պարա-դոքսն իր լուծումը գտավ միայն վերջերս, եւ բացատրությունը հետեւյալն է:

Բանաստեղծներն են հուշում

սկիզբը՝ էջ 10

Դիտումները հաստատում են, որ բավականաչափ մանր պոլիպոլիմերները, որ ունեն մեկ միլիմետրից պակաս տրամագիծ, վերել են ելնում ուղիղ, իսկ ավելի խոշորները դես ու դեն են տատանվում, «ճշտում» իրենց ուղեգծերը: Մեծ տրամագիծը պոլիպոլիմերը դարձնում է անկայուն, այն կորցնում է իր ողորկ գնդային տեսքը: Նրա մակերեսային հայտնվում են փոքր ու մեծ ծավալներով տեղամասեր: Այնտեղ, որտեղ ծավալը մեծ է, ջուրը պոլիպոլիմերը ջրհոսում է ավելի արագ, նշանակում է՝ նրա ճնշումն ստացվում է ավելի ցածր, ստիպելով տեղաշարժվել կողքի: Միաժամանակ՝ ճնշման նույն ցածրացումը թույլ է տալիս ուժեղ ճկված տեղամասին վերականգնել իր ձևը եւ «կլորանալ»: Բայց, մնալով անկայուն, պոլիպոլիմերը նորից ձեւախեղվում է, եւ ողջ պրոցեսը կրկնվում է նորից, առաջացնելով պարբերական տատանումներ մի կողքից մյուսը: Կրիտիկական չափերը գերազանցելու դեպքում (ճշգրիտ ասած՝ դա 0,926 մմ-ն է) պոլիպոլիմերը դեֆորմացվում է ի պատասխան ջրի կողմից նրա վրա ազդող ուժի, եւ, հակառակը, պոլիպոլիմերը ձեւը փոխում է իր շուրջը եղած ջրի հոսքի բնութագրերը:



հաշոցներ, ճապոցներ, ժեստեր... Իսկ լսողությունը: Դեֆինների քթանցքում տեղավորված է ձայնաազդանշանային մի օրգան, եւ ուղեղի մեծ չափերի շնորհիվ դեֆինները կարողանում են վերանշակել ձայնային տեղեկություններ եւ հեռու մնալ վտանգից: Իսկ մարմնի ձեւը, որ թույլ է տալիս լողալու մինչեւ 50 կմ/ժ արագությամբ: Նրանք լողում են շրջանաձեւ եւ մի աչքով միշտ հետեւում, որ հանկարծ թշնամիներ չհայտնվեն տեսադաշտում: Որոշ ժամանակ անց սկսում են լողալ հակառակ ուղղությամբ եւ հետեւել մյուս աչքով, որ նախորդը գոնե մի քիչ հանգստանա՝ փակ մնալով: Մտածում են նույնիսկ աշուկների մասին:

180) Բիոնիկա

«Ելնեն, ծաղկունքն է ձնծաղիկների՝ Չյունից ինձ նայող
աչերն համբուրեն,
Գնամ ետելից ծիծեռնակների՝
Նրանց հետ ետ գամ՝
գարունը բերեն»:
 Յ. Շիրազ

«Դա անհնարին է, - ասում է Փորձառու-թյունը:
 - Այն է, ինչ որ է, - ասում է Սերը»:
 Երիխ Ֆրոմ

Կա մի գիտություն՝ բիոնիկան, որը կենդանի բնության ձեւերը եւ հատկությունները կիրառում է տեխնիկական սարքերում եւ համակարգերում: Օրինակ՝ ուսումնասիրում է մարդու եւ կենդանիների նյարդային համակարգը եւ դա օգտագործում է ՍՏ ուղրոտի նոր մշակումներում, հետազոտում է կենդանի օրգանիզմների զգայարանները՝ նոր տվյալների եւ որոնման սարքերի ստեղծման համար, ուսումնասիրում է տարբեր կենդանիների կողմնորոշման, տեղորոշման, մակիզացիայի սկզբունքները՝ դրանք տեխնիկայում օգտագործելու համար, հետազոտում է կենդանի օրգանիզմների մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական առանձնահատկությունները՝ նոր տեխնիկական ու գիտական գաղափարներ առաջ քաշելու համար:

Օրինակ՝ ինչքան բաներ կարելի է սովորել դեֆիններից: Ատենք՝ նրանց քնի առանձնահատկությունները: Նրանք կաթնասուններ են, ջրի տակ կարող են խեղդվել (ամեն 3-5 րոպե մեկ դուրս են գալիս ջրից ու շնչում): Եվ ահա պարզվում է՝ դեֆինների մարմնի մի մասը քնում է, մյուսը ուշադիր ու արթուն հետեւում վտանգների: Յետո մարմնի մյուս կեսն է քնում, մյուսը մնում է արթուն: Չապա նրանց հաղորդակցությունը՝ սուլոցներ, շունիկների նման



Այժմ կիրառական բիոնիկայի մի քանի նվաճումների մասին:

1) Արագընթաց գնացքը եւ երկնագույն ծղմին: Ծաղկունքն արագընթաց գնացքները, նույնիսկ ոչ շատ մեծ՝ 270 կմ/ժ արագությունների դեպքում, թունելից դուրս գալուց հետո հզոր ձայնային ալիք էին առաջացնում: Եվ ահա ինժեներներն ուշադրություն դարձրին ծղմին. այս թռչնակը սնվում է մանր ձկներով եւ մեծ արագությամբ մտնում ջրի մեջ, ինչպես դանակը՝ կարագի: Մինչդեռ ջրի խտությունը 800 անգամ ավելին է, քան օդինը: Ինժեներ Նակագուն հասկացավ՝ գաղտնիքը կտուցի ձեւի մեջ է: Եվ էլեկտրագնացքի քթային մասն արվեց ճիշտ նույն կերպ: Օդի դիմադրությունը նվազեց 30%-ով, արագությունն աճեց մինչեւ 300կմ/ժ, աղմուկի մակարդակը էպես նվազեց՝ ավելի ցածր, քան փոշեկուլիները:

2) Մյունխենի օլիմպիական մարզադաշտը: Ծարտարապետ Գ. Բենիշը ծառայել էր սուգանավի վրա եւ ատում էր փակ, մութ տարածությունները: Նա նախընտրում էր ձեւեր, որտեղ շատ էին ապակին ու լույսը: Եվ որպես իր երազանքի մարմնավորում՝ մարզադաշտում օգտագործեց ճյուղի թելերի կառուցվածքը. դրանք շատ նուրբ են (հաստությունը՝ միլիմետրի հարյուրորդականը), բայց ամուր: Եվ դա այն պատճառով, որ բաժանված են բազմաթիվ հատվածներով: Մարզադաշտի տանիքը պատրաստվեց այդ սկզբունքով:

3) Ինքնաթիռների «սեւ արկղերը» եւ անտառի թմբկահարը: Ինչու՞ չի ցավում փայտփորիկի գլուխը: Ախր նա կտուցով ծառին է հարվածում վայրկյանում 22 անգամ, ու գլուխը դիմանում է 1200 գ ծանրաբեռնվածության: Իսկ մարդիկ ուղեղի ցնցում են ստանում նույնիսկ 100 գ-ի դեպքում: Ու ինժեներները պարզեցին, որ փայտփորիկն ունի մի քանի տեխնիկական «նուռ-հաուս»-ներ. ճկուն կտուց, եթթալեզվային ոսկորի կառուցվածք, որը թույլ է տալիս մեխանիկական բեռնվածությունը

բաշխել ամբողջ զանգով մեկ, գլխի առջեւի սպունգակերպ ոսկորը, գլխի յուրօրինակ կառուցվածքը, որը հնարավորություն է տալիս ողնուղեղային հեղուկին կլանել վիրբացիան: Եվ հետազոտողները ստեղծեցին այդ կոնստրուկցիայի անալոգը. դա այժմ օգտագործվում է թռչող սարքերի էլեկտրոնիկան մեխանիկական հարվածներից պաշտպանելու համար:

4) Կենսաբան Ֆրենկ Ֆիշը հանձարեղ միտք հղացավ, երբ այցելեց պատկերասրահ: Նա այնտեղ տեսավ սապատավոր կետի արձանը: Դա անակնկալ մտածմունքների մեջ դրեց կենսաբանին: Ինչու՞ է անհրաժեշտ այդ հսկա լողորդներին նման ուռուցիկությունը: Պարզվեց, որ շնորհիվ դրա՝ կենդանիներն ունեն անընթացաբար մանրեւայնություն: Արդյունքում պրոֆեսորը հողմաէներգետիկ կայանների համար նոր տուրբին նախագծեց, որոնք թիակները՝ ցցված կողերերով, եւ էներգարդյունավետ էին ավելի, եւ պակաս աղմուկոտ, քան հարթերը:

5) Ճանապարհային անդրադարձիչները եւ կատվային աչքը: Մի անգամ անգլիացի գյուտարար Պերսի Շոուն գիշերը, ավտոմեքենայով երթեւեկելիս, կորցրեց կողմնորոշումը եւ դուրս եկավ ճանապարհից: Դիմացի պարսպի վրա նստած կատուն աղմուկից շրջվեց դեպի մեքենան, վերջինիս լույսերն անդրադարձան կատվի աչքերից, եւ Շոուն կարողացավ խուսափել վթարից: Գետազայում գյուտարարը նախագծեց հարմարանք, որը հիշեցնում է կատվի աչք: Էֆեկտը պայմանավորում են երկու շրջանաձեւ ռեֆլեկտորները: Դրանք այժմ կան աշխարհի բոլոր երկրների ճանապարհներին:

... Նկարում՝ Փարիզի էյֆելյան աշտարակը: Այն ճարտարապետության մեջ բիոնիկայի օգտագործման հանրահայտ օրինակ է: Աշտարակի կառուցվածքում օգտագործվել են ոսկորի կազմության առանձնահատկությունները. ոսկորը կազմված է մանր թիթեղիկներից, որոնք ցանց են առաջացնում: Ցանցում թիթեղիկները դասավորված են խիստ օրինաչափորեն՝ սեղման ուժի գծերով:

181) Զգացմունք եւ հույզ

«Զգացմունքն է գերիշխանը,
խելքը՝ նրա լոկ ծառան.
Բայց դու խելքդ վրա՞ դր պահիր,
ինչպես պողպատ կուռ վահան»:
 Ավ. Իսահակյան

«Կյանքիս հույզերն հոգիս նորեն կը փոթորկեն...
Ի՞նչ հուզումով, ողբորդդ ի՞նչ սարսուռներով
Կանչարժանամ՝ մայրամուտի սա մեծ ժամուն»:
 Մատթեոս Զարիֆյան

Չույզերը մարդու այսրոպեական ռեակցիաներն են շրջապատում կատարվող իրադարձությունների նկատմամբ: Դրանք առաջացնում են քիմիական փոփոխություններ, որոնք տարբեր կերպ կապված են մտածողության, վարքային հակազդումների, հաճույքի կամ տառապանքի աստիճանի հետ: Օրինակ՝ դուք ապրում եք ուրախություն, որովհետեւ մրցախաղում հաղթել է ձեր երկրպագած թիմը, կամ հիասթափված եք, որովհետեւ անգուշտորեն ասված խոսքը անքաղաքավարի թվաց: Նույնիսկ անտարբերությունը հույզ է:

Զգացմունքը բարդ հոգեկան վիճակ է, վերաբերմունքի արտացոլում եւ տեսական ապրում, որ կարող է առաջանալ հույզերի, մտքերի, տրամադրության կամ ցանկությունների ներգործությամբ:

Ի՞նչ ընդհանրություն կա այդ երկու հասկացությունների միջև: Օքսֆորդի բառարանն այսպես է ասում. «Չույզն ուժեղ զգացմունք է, որը սկիզբ է առնում հանգ-

մանքից, տրամադրությունից կամ այլոց հետ հարաբերություններից»:

Ամենաուժեղ զգացմունքը մոր սերն է երեխայի նկատմամբ եւ հակառակը: Շատերն ասում են, որ մայրական սերը նույնիսկ բնազդ է՝ ժառանգական վարքի բնածին արտահայտություն: Գուցե եւ այդպես:

Իսկ ինչպես պնդում են գիտնականները, տղամարդու եւ կնոջ սերը քիմիական պրոցեսներ են, բայց դա եւս զգացմունք է՝ խորը եւ ուժեղ:

Բարեկամությունը թերեւս ամենազարմանալի զգացմունքն է, որը կարող է լինել: Ընդ որում՝ դա կարող է ծագել ոչ միայն մարդկանց միջեւ, այլեւ մարդու եւ կենդանու: Ակսել Բակունցի «Սպիտակ ծիծ» պատմվածքի գլխավոր հերոսը՝ Սիմոնը, եղբոր պես սիրում էր իր ծիծուն Յուլիան: Վերջինս գեղջկական ընտանիքի հույսն է, եւ ընտանիքը արցունքով է ճանապարհում իր Յուլիան. չէ՛ որ նա տիրոջը հավասար աշխատել ու պահել է տնեցիներից: Կենդանու հետ կապվածությունը, ծիծուն մարդկանցումը հոգեկերտվածքին ու ապրելակերպին: Դրա համար էլ Սիմոնը հոգեկան անասելի ցավով հուսահատ փորձ է անում փրկելու Յուլիան: Չի հաջողում. ծիծուն տանում են: Ու մարդու մեջ ալիք է տալիս տանջող կսկիծը՝ այդ դեպքում ինչու՞ ցավ պատճառեց իր սիրելիին. իր վատությունը մնաց, ծիծն նեղացավ իրենից...



Մարդու եւ կենդանու ցնցող բարեկամության մի ուրիշ պատմություն է «Սպիտակ Բիմ-Սեւ Ականջ» ֆիլմը...

Վերը ասվածներից կարելի է անել պարզ եզրակացություն. զգացմունքները ծագում են հույզերից: Զգացմունքը կարող է մարել, եթե ծնունդ որեւէ հույզ: Դա վերաբերում է նաեւ կնոջ եւ տղամարդու սիրուն, բարեկամությանը: Էլ ի՞նչ բարեկամություն, եթե երկուսին հետաքրքիր չէ միասին լինելը: Բայց եթե կարողանաս հիշել այն հույզերը, որ դուք ունեցել եք մինչ սառնությունը, որ զգացմունքն են ձեւավորել, ապա ամեն ինչ դեռ առջեւում է:

Դաստիարակել սեփական զգացմունքները՝ դա մի ամբողջ գիտություն է եւ բարձր մարդկային որակ:

Իսկ չկա՞ որեւէ տարբերություն հույզերի եւ զգացմունքների միջև: Առաջինները կարելի է կառավարել, երկրորդը միայն զգալ. այսպես են ասում հոգեբանները:

Զարուհի ՊԵՏՐՈՍՅԱՆ
Շիրակի մարզի Արթիկի
հ. 3 ավագ դպրոցի
ուսուցչուհի, բնագետ

Արհա ՊԵՏՐՈՍՅԱՆ
Շիրակի մարզի Արթիկի
հ. 2 հիմնական դպրոցի
ուսուցչուհի, բանասեր



Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «*Երևանի Վ. Բելինսկու անվան հ. 38 հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (25 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (*Չեւ 1*), *մեկ լուսանկար 3x4 չափի*,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- *անձը հաստատող փաստաթուղթ*,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- *ինքնակենսագրություն (Չեւ 5),*

- *այլ պետությունների քաղաքացիները` ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝

ճանե զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։

Տճօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բժօրինակները համեմատում է պատճենների հետ և բժօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են ***փետրվարի 15-ից մինչև փետրվարի 28-ը ներոայալ, ամեն օր` ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։***

Մրցույթը տեղի կունենա ***մարտի 2-ին՝ ժամը 12:50-ին***, Երևանի Վ. Բելինսկու անվան հ. 38 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 22։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 44-00-66 հեռախոսահամարով։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ` ՀՀ Սյունիքի մարզի «*Կապանի հ. 6 հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի կենսաբանության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (*Չեւ 1*), *մեկ լուսանկար 3x4 չափի*,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- *անձը հաստատող փաստաթուղթ*,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- *ինքնակենսագրություն (Չեւ 5),*

- *այլ պետությունների քաղաքացիները` ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝

ճանե զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։

Տճօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բժօրինակները համեմատում է պատճենների հետ և բժօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են ***փետրվարի 15-ից մինչև փետրվարի 28-ը ներոայալ, ամեն օր` ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։***

Մրցույթը տեղի կունենա ***մարտի 3-ին՝ ժամը 14:00-ին***, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի հ. 6 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Կապան, Մ. Հարությունյան 5-Ա։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 78-29-55 հեռախոսահամարով։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ` ՀՀ Արարատի մարզի «*Խաչվարի միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի աշխարհագրության (15 դասաժամ), բնագիտության (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (*Չեւ 1*), *մեկ լուսանկար 3x4 չափի*,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- *անձը հաստատող փաստաթուղթ*,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- *ինքնակենսագրություն (Չեւ 5),*

- *այլ պետությունների քաղաքացիները`*

ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝

ճանե զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։

Տճօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բժօրինակները համեմատում է պատճենների հետ և բժօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են ***փետրվարի 15-ից մինչև փետրվարի 28-ը ներոայալ, ամեն օր` ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։***

Մրցույթը տեղի կունենա ***մարտի 3-ին՝ ժամը 14:30-ին***, ՀՀ Արարատի մարզի Խաչվարի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Խաչվար, 5-րդ փ., շ. 15։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 83-60-84 հեռախոսահամարով։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ` ՀՀ Արարատի մարզի «*Մարմարաշենի Ա. Բարուբյանի անվան միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի ֆիզիկուտուրայի (23 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (*Չեւ 1*), *մեկ լուսանկար 3x4 չափի*,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- *անձը հաստատող փաստաթուղթ*,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- *ինքնակենսագրություն (Չեւ 5),*

- *այլ պետությունների քաղաքացիները`*

ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝

ճանե զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։

Տճօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բժօրինակները համեմատում է պատճենների հետ և բժօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են ***փետրվարի 15-ից մինչև փետրվարի 28-ը ներոայալ, ամեն օր` ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։***

Մրցույթը տեղի կունենա ***մարտի 6-ին՝ ժամը 14:00-ին***, ՀՀ Արարատի մարզի Մարմարաշենի Ա. Բարուբյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Երեւան-Արտաշատ խճուղի 71։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 97-64-80 հեռախոսահամարով։

Ա Ձ Դ

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ` ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի «*Բաղեյան*» պետական քոլեջ ՊՈԱԿ-ի նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնարանի «*Ոսկերչություն*» մասնագիտական խմբի վարպետի (1 դրույթ), «*Կարի արտադրության տեղնդոզիա*» մասնագիտական խմբի վարպետի (1 դրույթ) և 2-րդ կիսամյակի համար «*Հագուստի հանգույցների մշակման նոր մեթոդներ*» (36 ժամ), «*Հագուստի ոճերի պատմություն*» (36 ժամ), «*Մասնագիտության հիմունքներ*» (38 ժամ, «*Ձեռքի և մեքենայի կարտահանք*» (18 ժամ, «*Մանր մասնիկների մշակում*» (18 ժամ) ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական առարկաների (մոդուլ) դասավանդողների թափուր տեղերի համար։

Մրցույթն անցկացվում է բանավոր հարցազրույցի միջոցով։ Ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում։Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,

Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությանը մասնագիտական աշխատանքային փորձ և մասնագիտական կրթություն։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել`

- *անձը հաստատող փաստաթուղթ (բժօրինակը և պատճենը),*

- *աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)*

- *ինքնակենսագրություն (Չեւ 4),*

- *դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

- *այլ պետությունների քաղաքացիները`* ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ բացառությամբ ՀՀ համապատասխան միջազգային պայմանների ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները` ճանե զինվորական գրքույկ,

- *հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)։*

Տճօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բժօրինակները համեմատում է պատճենների հետ և բժօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են ***2023թ. փետրվարի 15-ից մինչև մարտի 7-ը ներառյալ, ամեն օր` ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։***

Մրցույթը տեղի կունենա ***2023թ. մարտի 10-ին, ժամը` 11:00-ին և ժամը` 14:00-ին***, ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Վարդենիսի «*Բաղեյան*» պետական քոլեջում, հասցեն՝ ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 5։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 87-58-02 հեռախոսահամարով։

Հայտարարություն

Հայտարավում է մրցույթ ՀՀ ԿԳՄՍՆ «*Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարան*» ՊՈԱԿ-ի «*Խոտհարարական գործ*» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետի (1 դրույթ), «*Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում*» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետի (1 դրույթ) և «*Ինֆորմատիկա*» առարկայի (տարեկան 236, շաբաթական 5,9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար։

Արտադրական ուսուցման վարպետների և ուսուցչի վարձատրությունը որոշվում է՝ ըստ հաստիքացուցակի, տարիֆիկացիոն ցուցակի և դասաբաշխման։

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր հարցազրույցի միջոցով՝ ըստ ուսումնարանի կողմից կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը։

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝

1) *հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,*

2) *մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին։*

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) *Դիմում,*

2) *Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) բնօրինակը,*

3) *Անձնագիր (բժօրինակը և պատճենը),*

4) *Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),*

5) *Ինքնակենսագրություն (Չեւ4),*

6) *Մեկ լուսանկար 3X4 չափի,*

7) *Այլ պետությունների քաղաքացիները` ՀՀ- ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,*

8) *ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են ճանե զինվորական գրքույկ (բժօրինակը և պատճեն),*

9) *Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան կոչումը հաստատող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։*

Փաստաթղթերն ընդունվում են ***2023թ. փետրվարի 15-ից մինչև փետրվարի 28-ը ներառյալ, ամեն օր` ժամը 10:00-ից 16:00-ը բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։***

Մրցույթը տեղի կունենա ***2023թ. մարտի 3-ին ժամը 13:00-ից***, Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարանում, հասցեն՝ ք. Եղվարդ, Երեւնյան 10։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 26-91-26, (077) 56-39-52 հեռախոսահամ

